Մարտիրոսյանը Ծաղկաձորում մոտեցել է Մարդանովին, բարեւել, վերջինս մաքուր հայերենով պատմել է, որ ինքը Դիլիջանի շրջանի Սալահ (այժմ՝ Աղավնավանք) գյուղում է ծնվել, եւ մի խնդրանք ունի՝ «ուզում եմ գնալ իմ հայրենի գյուղ, որտեղ ինստիտուտն ավարտելուց հետո չեմ եղել»: Մարտիրոսյանը չի իմացել, թե ինչ պատասխանի:

Կարդացեք՝ էջ 4

ՀՀ ՍԴ-ն ունի՞ այս հարցի պատասխանը, այդ ինչպե՞ս պատահեց, որ ամեն ինչ ձախողած Նիկոլ Փաշինյանն ավելացրեց իր ընտրողների թիվը: Իմ հաշվարկներով, Նիկոլին ձայն կարող էին տալ Նիկոլը (+ ընտանիք), ՔՊ-շնիկները (պլյուս-մինուս ընտանիք եւ պարգեւավճար), պետական աշխատողները (պլյուս-մինուս ընտանիք եւ պարգեւավճար):

Կարդացեք՝ էջ 5

Գյուղատնտեսական արտադրանքի արտահանումը մոտավորապես 1 միլիարդ դոլարի շրջանակում է: 1 միլիարդ եւ 35 միլիոն՝ կարո՞ղ է մեղմացուցիչ հանգամանք դիտարկվել, իհարկե՝ ոչ: Երկրորդ հարցը. ԵՄ-ն տրամադրում է ինչի՞ համար՝ գյուղատնտեսության զարգացման, շուկաների դիվերսիֆիկացման, բնականաբար, դրանց վերաբերյալ չէ:

Կարդացեք՝ էջ 6

Հրապարակ

Hraparak daily newspaper
4/41 Mashtoc St.
0010 Yerevan, RA
tel.52 66 70
info@hraparak.am

ISSN 1829-2372

ՕՐԱԹԵՐԹ, 200 դրամ

N 109 (4244), 3 հուլիս, ուրբաթ, 2026

www.hraparak.am

Ալխաս Ղազարյանն ու Արուսյակ Մանավազյանն օրենքի նախագիծ են դրել շրջանառության մեջ, որով արտերկրում ապրող ՀՀ քաղաքացիներին ընտրական իրավունքից կզրկեն, եթե նրանք վերջին 6 ամսում Հայաստանում չեն եղել: Հիմնավորումն այն է, որ ՌԴ-ից ՀՀ քաղաքացիները գալիս եւ քվեարկում են ընդդիմադիրների օգտին: Մենք փորձեցինք պարզել, թե հունիսի 7-ի շեմին քանի մարդ է ժամանել Հայաստան: «Զվարթնոց» օդանավակայանի մեր աղբյուրներից պարզեցինք, որ 2026 թ. մայիսի 1-ից մինչեւ հունիսի 4-ն ընկած ժամանակահատվածում Հայաստան ժամանած ՀՀ քաղաքացիների թիվն այս տարի ավելի քիչ է եղել, քան նախորդ տարվա նույն օրերին: Տարբերությունը եղել է 13 հազար 390 քաղաքացի կամ 7,5 տոկոսով պակաս: Պարզվում է՝ 2025 թ. մայիսին եւ հունիսի առաջին 4 օրերին օդային եւ ցամաքային ճանապարհով Հայաստան է ժամանել 193 հազար 47 ՀՀ քաղաքացի, իսկ 2026-ի նույն օրերին՝ 179 հազար 657 քաղաքացի: Մեր աղբյուրն ասաց, որ միայն «Շիրակ» եւ «Զվարթնոց» օդանավակայանների անցակետերով են 2026-ին Հայաստան ժամանել 2 հազար 571-ով ավելի շատ ՀՀ քաղաքացի, քան 2025-ին: Նախորդ տարի այդ թիվը 79 հազար 670 էր, այս տարի՝ 82 հազար 241 քաղաքացի, սակայն դրանից ընդհանուր ժամանողների թվերը չեն փոխվում: Այժմ հարց՝ ինչո՞ւ է ԱԺ-ն նման հակասահմանադրական նախագիծ ընդունում:

Թեպետ ամիսներ առաջ ՔՊ-ում խոսում էին, որ Փաշինյանը ԱՄՆ-ում նախկին դեսպան Լիլիթ Մակունցին ԱԺ-ում բարձր պաշտոնի է պատրաստում՝ ԱԺ խոսնակ կամ խմբակցության ղեկավար, սակայն Մակունցն ինչ-որ պահի հրաժարվել է դրանից: Դեր է խաղացել թիմի ռեակցիան, թե ինչու պիտի մենք այսքան թուքումուր ուտենք, տանջվենք՝ նա ԱՄՆ-ից գա, բարձր պաշտոնի նստի: Ինքն էլ է հասկացել, որ ո՛չ Վահագն Ալեքսանյան կարող է լինել, ո՛չ Արթուր Հովհաննիսյան կամ Ռուբինյան, եւ խնդրել է իրեն թողնել գործադիրում՝ թեկուզ ոչ բարձր պաշտոնի: Բայց ՔՊ-ում խանդավառված չեն ԱԺ ղեկավար պաշտոնների հավակնորդներով, հատկապես՝ խմբակցության ղեկավարի, որը, կարծում են՝ ավելի բարձր ստատուս ունի, քան ԱԺ փոխնախագահը: Հատկապես ապշած են, որ թերի կրթությամբ ու ոչնչով աչքի չընկած Արուսյակ Մանավազյանը նման հավակնություններ ունի՝ որքան էլ նա Փաշինյանի ֆինանսներն է տնօրինել եւ նրա աչքն ու ականջն է ՔՊ-ում, սակայն չի ձգում խմբակցության ղեկավարի կարգավիճակին՝ ո՛չ քաղաքական միտք ունի, ո՛չ շշպռելու հմտություն: Ենթադրում են, որ Փաշինյանը որոշել է կամակատար դնել, որ անձամբ ղեկավարի ֆրակցիան:

Ղժժում են մեզ վրա

Ես պատկերացնում եմ, թե ինչ հրճվանքով ու ազարտով են դիտում Սահմանադրական դատարանի քննությունը Նիկոլ Փաշինյանն ու իր փոքրաթիվ զինակիցները: Չէ՞ որ նրանք ամենալավը գիտեն, թե ինչ ֆանտաստիկ խախտումների, մանիպուլյացիաների, ընտրակաշառքի, ճնշումների գնով են հասել 49 տոկոսանոց արդյունքին, եւ հիմա՝ էկրանների առաջ նստած, ուղղակի «ղժժում» են մեզ բոլորիս վրա: Ծիծաղում եւ ծաղրում են իրավաբանական նուրբ տերմիններ օգտագործող, մասնագիտական լուրջ վերլուծություններ անող փաստաբաններին, որոնք փորձում են իրենց առաջ գտնվող «պատը», որը կոչվում է Սահմանադրական դատարան, իրենց ազնիվ ճակատներով փլուզել: Թերեւս, հեգնանքով ու քամահրանքով կարդում են հանրային ու քաղաքական գործիչների վերլուծությունները՝ ընտրությունների ընթացքում թույլ տրված խախտումների, իրենց լեգիտիմության պակասի, դրսի աջակցությամբ հերթական իշխանազավթման մասին: Հետեւում են իրենց հասցեին հնչող լուտանքներին ու անեծքներին, որ հասարակ մարդիկ բարձրաձայնում են՝ որպես սրտահովանք: Հետեւում են ու իրենց ֆեյքերին, իրենցից կախում ունեցող մարդկանց հրահանգում՝ «հուժկու հակահարված» տալ: Վստահ եմ, որ այս ողջ ընթացքում Նիկոլ Փաշինյանը եւ նրա որոշ ենթականեր իրենց կազմած «սեւ ցուցակներն» են լրացնում, թե հաջորդն ում են բռնելու, «կզըցնելու», հոշոտելու: Եվ այդ ցանկում միայն քաղաքական մրցակիցները չեն, շուտով երկրի բնակիչների 80 տոկոսը կլինի, որովհետեւ իրենք ամենալավը գիտեն, թե ինչքան շատ մարդ է իրենց մերժել: Եվ այդ սուտ խոսքերին մի հավատացեք. «Ժողովուրդը լավ գիտի՝ ով է ընտրվել, եթե այս շենքում չընտրված մարդ լիներ, իրենց վերաբերմունքը ցույց կտային»,- ասում է այդ շենքում զմռսվածը, բայց դա ընդամենը իրենց մերժողների նկատմամբ հոգեբանական ճնշման պրիյոմ է:

ԱԺ ապագա խոսնակ Ռուբեն Ռուբինյանը դեռ չի ընտրվել, սակայն Ալեն Սիմոնյանի կադրերն արդեն ճամպրուկներն են հավաքում: Նրանք լսել են, որ Ռուբինյանն իր մարդկանց է բերելու, ուստի որոշել են ինքնակամ գնալ: Երեկ անգամ աշխատակազմի ապագա ղեկավարի անունն էր շրջանառվում: Ալեն Սիմոնյանի ընկերոջը՝ Դավիթ Առաքելյանին կփոխարինի Ռուբեն Ռուբինյանի ընկերը՝ Արման Բարխուդարյանը, որը նրա խորհրդականն է՝ Երեւանի ավագանու անդամ, Մալաթիայի նախկին թաղապետ: Նրա նկատմամբ ժամանակին քրգործ կար՝ յուրացումների մեղադրանք: Բարխուդարյանին հարցրինք՝ հավաստի՞ են այդ լուրերը: Նա նախ փորձեց պարզել՝ ով է նման տեղեկություն տարածել, ապա չպատասխանեց հարցին: Նա Ռուբինյանի կնոջ հետ իջնում էր ԱԺ բուֆետ, տիկինը ձայն տվեց՝ արի:

ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՎՐԱ ԳՐՈՒՊ ՀԱՋՈՐԴ ՇՈՒԼՆ Է ՍԿՍՎՈՒՄ

Այսօր՝ հուլիսի 3-ին, տեղի է ունենալու Դատավորների ընդհանուր ժողովը, որի օրակարգում դատավորների էթիկայի եւ կարգապահական հարցերով հանձնաժողովի 3 անդամի ընտրությունն է: Մինչ օրենքում փոփոխությունները, հանձնաժողովը կազմված էր 6 դատավոր եւ 2 ոչ դատավոր անդամից, բայց քաղհասարակության պահանջով ոչ դատավոր անդամների թիվն ավելացրին է երեքով՝ հինգը վեցի հարաբերակցությամբ: Թափուր 3 տեղի համար 7 թեկնածու է առաջադրվել՝ դատավոր Արմինե Թումասյանը, վճռաբեկ դատարանի աշխատակից Մելիք Մելիքյանը, Արթուր Սաքունցը, «Իրավունքների պաշտպանություն՝ առանց սահմանների» ՀԿ ներկայացուցիչ Հասմիկ Հարությունյանը, «Թրանսփարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կոմիտե»-ի ներկայացուցիչ Անուշ Մկրտչյանը, իրավաբան Լուսինե Հակոբյանը՝ «Իրավունքի Եվրոպա» ՀԿ-ից, եւ ոմն Արտակ Մկրտչյան: Այսօրվա ընտրությունից հաշված օրեր առաջ պարզվում է՝ Հանրայինը կանչել է Լուսինե Հակոբյանին եւ հարցազրույց վարել, որում թեկնածուն չի շրջանցել նաեւ դատավորների էթիկայի եւ կարգապահական հարցերով հանձնաժողովի թեման: Այս հանգամանքը, մեր տեղեկություններով, վրդովմունք է առաջացրել ոչ միայն նրա մրցակիցների շրջանում, որոնք կարծում են, որ այդպիսով անհավասար մրցակցային պայմաններ են ստեղծվել իրենց համար, այլեւ՝ հանձնաժողովի անդամներին ընտրող անկախ դատավորների շրջանում: Մեզ ասացին, որ այս փաստը, ըստ էության, մեսիջ է դատավորներին, թե ում է տեսնում Փաշինյանն այդ հանձնաժողովի թափուր տեղերից մեկում: Ակնհայտ է, որ դատական համակարգը կառավարելու, յուրայիններին ամեն տեղ խցկելու փորձեր են արվում:

ԱՎԱԳԱՆԻ

ԳՅՈՒՄՐԻՆ ԿԱՐՈՂ Է ԿԻՆ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՈՒՆԵՆԱԼ

Հուլիսի 15-ին նախատեսված է Գյումրու ավագանու արտահերթ նիստը: Սկզբում նախատեսում էին հուլիսի 3-ին, ապա օրը փոխվեց: Ըստ ամենայնի, կապված է ընդդիմության կողմից մանդատները վերցնելու որոշման հետ:

Քաղաքի ընդդիմադիր իշխանությունը կարծես վստահ է, որ 15-ի նիստը կկայանա, քանի որ մեկ մանդատի հետ կապված հարցն արդեն լուծված է: Հիշեցնենք, որ նախորդ արտահերթ նիստը տապալվեց իշխանությունների ձեռնարկած քայլերի հետեւանքով. «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունը բոյկոտեց նիստը՝ չմասնակցեց, նույն օրը խուզարկություն իրականացվեց ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության ղեկավար Կարեն Սիմոնյանի բնակարանում: ՔՊ-ական իշխանությանը թվում էր, թե իրավապահների օգնությամբ իրենց կհաջողվի հասնել նպատակին՝ նիստը տապալել, ճգնաժամ առաջացնել, որ Գյումրիում նոր ընտրություն նշանակելու օրինական հիմք ստեղծեն, սակայն Գյումրու ընդդիմությունը շարունակում է պայքարել ու պահպանել քաղաքային իշխանությունը, ինչպես իրենք են ասում՝ «ատամներով»:

Սակայն նույնիսկ եթե հուլիսի 15-ի ավագանու արտահերթ նիստը կայանա, Գյումրիում զարգացումները դրանով չեն ավարտվելու: Թեեւ ավագանին եռամսյա ընդմիջումից հետո կվերսկսի աշխատանքը, մինչ այդ հնարավոր են նոր քաղաքական վերադասավորումներ: Մասնավորապես, եթե ընդդիմադիր ուժերը որոշեն վերցնել ԱԺ մանդատները, ԱԺ կանցնի նաեւ քաղաքապետի պարտականությունները կատարող, փոխքաղաքապետ Ավետիս Առաքելյանը, որը Վարդան Ղուկասյանի փեսան է եւ «Ուժեղ Հայաստան» կուսակցության ցուցակի 8-րդ համարը:

Մեր տեղեկություններով՝ Առաքելյանը հակված է գնալ ԱԺ: Այսինքն, Գյումրին փաստացի կմնա առանց քաղաքապետի: Փորձեցինք իրավական տեսանկյունից պարզել, թե նման իրավիճակում ինչ ընթացակարգ է նախատեսված, եւ ինչ զարգացումներ կարող են հաջորդել: Եթե Ավետիս Առաքելյանը հրաժարվի քաղաքապետի պարտականություններից եւ վերցնի պատգամավորի մանդատը, Գյումրու ընդդիմադիր չորս խմբակցությունները ստիպված կլինեն քաղաքապետի պարտականությունները կատարող նոր անձ ընտրել: Մեծ է հավանականությունը, որ ՔՊ խմբակցությունը, ինչպես նախորդ դեպքերում, կամ չի մասնակցի ընտրությանը, կամ մասնակցելու դեպքում դեմ կքվեարկի, քանի որ ընդդիմադիր ուժերը, բնականաբար, կառաջադրեն իրենց թեկնածուին: Իսկ ո՞վ կարող է լինել այդ թեկնածուն: Մեր աղբյուրների փոխանցմամբ՝ քննարկումների ընթացքում դիտարկվել են տարբեր տարբերակներ: Մասնավորապես, ուսումնասիրել են Կոմունիստական կուսակցության ավագանու կազմը, որն այս ընտրություններում Վարդան Ղուկասյանի շնորհիվ ամենամեծ խմբակցությունն է՝ Ղուկասյանը ՀՀԿ-ի ցուցակով է մասնակցել ընտրություններին: Իսկ ՀՀԿ ցուցակում չկա այդպիսի թեկնածու, որը կարողանա փոխարինել Ավետիս Առաքելյանին: Ինչ վերաբերում է Մարտուն Գրիգորյանի «Իմ հզոր համայնք» խմբակցությանը, որն ավագանիում ներկայացված է 4 անդամով, ապա այստեղ եւս, ըստ մեր աղբյուրների, քաղաքապետի պարտականությունները կատարողի հավանական թեկնածու չի դիտարկվում: Խմբակցության ղեկավար Ռուբեն Մխիթարյանը դեռ ամենասկզբում հայտարարել էր եւ այժմ էլ պահպանում է նույն դիրքորոշումը, որ չի հավակնում ո՛չ քաղաքապետի, ո՛չ էլ փոխքաղաքապետի պաշտոնին: Մինչդեռ «Մայր Հայաստան» խմբակցության ղեկավար Կարեն Սիմոնյանը, մեր աղբյուրների փոխանցմամբ, ընդդիմադիր ուժերի շրջանում դիտարկվում է որպես ամենաընդունելի հավանական թեկնածուներից մեկը:

Ըստ մեր զրուցակիցների՝ Սիմոնյանը կարողանում է համագործակցել ընդդիմադիր բոլոր խմբակցությունների հետ եւ կարող է դառնալ միասնական թեկնածու: Թերեւս, հենց այս հանգամանքով կարող են պայմանավորված լինել վերջին շրջանում նրա նկատմամբ իրականացվող իրավական գործողություններն ու ճնշումները: Մեր աղբյուրների փոխանցմամբ՝ ամենահավանական տարբերակներից մեկն այն է, որ քաղաքապետի պարտականությունները կատարողի հարցը լուծվի «Մեր քաղաքը» խմբակցության միջոցով: Ըստ նույն աղբյուրի՝ դա պայմանավորված է նրանով, որ Մարտուն Գրիգորյանը տարբեր փուլերում աջակցել է քաղաքային կառավարման կայունությանը եւ մասնակցել ընդդիմադիր ուժերի միջեւ ձեռք բերված պայմանավորվածություններին:

Միեւնույն ժամանակ, մեր զրուցակիցը չբացառեց, որ վերջին օրերին տեղի ունեցած որոշ իրադարձություններ կարող էին կապված լինել քաղաքական զարգացումների հետ: Խոսքը վերաբերում է Մարտուն Գրիգորյանի որդու՝ իրավապահ մարմիններին ներկայանալուն եւ ձերբակալվելուն: Հայտնի է, որ նա հետախուզման մեջ էր եւ, պաշտոնական տեղեկությունների համաձայն, ինքնակամ ներկայացել է իրավապահ մարմիններին, որից հետո ձերբակալվել է: Միաժամանակ, քննարկվում են նաեւ այլ հնարավոր սցենարներ: Մարտուն Գրիգորյանի ավագ որդին ձերբակալվել է, մինչդեռ կրտսեր որդին Գյումրու ավագանու անդամ է: Թեեւ նրա անունը եւս շրջանառվում է որպես հնարավոր թեկնածուի, մեր աղբյուրի փոխանցմամբ՝ այդ տարբերակը քիչ հավանական են համարում: Գրիգորյանի կրտսեր որդու նկատմամբ նույնպես իրավական որոշ գործընթացներ են ընթանում, ինչի պատճառով, հավանաբար, Մարտուն Գրիգորյանը չի առաջադրի նրան փոխքաղաքապետի կամ քաղաքապետի պաշտոնում՝ նախընտրելով խուսափել հավելյալ լարվածությունից եւ որդուն թիրախ դարձնելուց: Փոխարենը, մեր աղբյուրի խոսքով, առավել հավանական թեկնածուներից է համարվում «Մեր քաղաքը» խմբակցության քարտուղար Լիզա Գասպարյանը:

Նա Գյումրիում ճանաչված կին քաղաքական գործիչներից է, համարվում է բավականին փոխզիջումային թեկնածու: Եթե, ի վերջո, ընտրությունը կանգ առնի նրա վրա, ապա նա կստանձնի քաղաքապետի պարտականությունները կատարողի գործառույթները: Մեր աղբյուրների գնահատմամբ՝ նման նշանակումը կարող է նաեւ որոշակիորեն մեղմել Գյումրիում ստեղծված քաղաքական լարվածությունը:

Բացի այդ, այս սցենարի դեպքում գործող քաղաքապետ Վարդան Ղուկասյանը կմղվի հետին պլան: Նրա նկատմամբ Նիկոլ Փաշինյանը հատուկ սեւեռում ունի, եւ սա նաեւ ՔՊ-ին ու գործող իշխանությանն է ձեռնտու: Սակայն, ինչպես նշում են մեր աղբյուրները, այս ամենը առայժմ քննարկվող սցենարներ են, եւ վերջնական որոշումներ դեռ չեն կայացվել: Թե ինչ զարգացումներ կլինեն իրականում, պարզ կդառնա առաջիկա օրերին՝ հատկապես Գյումրու ավագանու արտահերթ նիստից հետո: Ի դեպ, ըստ մեր տեղեկությունների, իշխանական շրջանակներում քննարկվում է նաեւ Գյումրու վարչատարածքային կառուցվածքի փոփոխության հնարավոր տարբերակը: Մասնավորապես, դիտարկվում է համայնքի խոշորացման սցենարը՝ Գյումրուն միացնել հարակից գյուղական բնակավայրերը: Եթե նման փոփոխություն իրականացվի, սա կարող է փոխել ընտրական հաշվեկշիռը, եւ նոր ընտրությունների պարագայում ՔՊ-ն շանս կունենա Գյումրին զավթել: Այնպես, ինչպես արեց Վաղարշապատում՝ նոր խոշորացմամբ իր թեկնածուի շանսերը մեծացնելով:

Արեւիկ ՀԱԿՈԲՅԱՆ

ՏԵՍԱՆՔ ՍԴ, ՈՐՆ ՈՒԶՈՒՄ ԷՐ ՇՈՒՏԱՓՈՒՅԹ ԱՎԱՐՏԵԼ, ՉԽՈՐԱՆԱԼ ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ՀԱՐՑԵՐԻ ՄԵՋ

Երեկ Սահմանադրական դատարանն ավարտեց յոթ քաղաքական ուժերի դիմումների քննությունը, որոնցով պահանջվում է անվավեր ճանաչել հունիսի 7-ի քվեարկության արդյունքները:

Դատավորները հեռացել են խորհրդակցական սենյակ: Դիմումների վերաբերյալ որոշումը Սահմանադրական դատարանն ամենաուշը հուլիսի 4-ին պետք է կայացնի: Քննության ընթացքի ու կանխատեսումների շուրջ զրուցել ենք ՍԴ-ում «Հայաստան» դաշինքի ներկայացուցիչ **Հովհաննես Խուդոյանի** հետ:

- Ինչպե՞ս անցավ դիմումների քննության ընթացքը, ինչպե՞ս իրեն դրսեւորեց ՍԴ-ն:

- Մենք տեսանք ՍԴ, որն ուզում էր շուտափույթ ավարտել ամեն ինչ ու չխորանալ բարձրացված հարցերի մեջ: Մենք դա հասկացանք իրենց՝ միջնորդությունների նկատմամբ վերաբերմունքից, որովհետեւ միջնորդություններում շատ սուր հարցեր էին բարձրացվում, որոնց պատասխանները ՍԴ-ն չուզեց ստանալ:

- Դուք մինչ քննության մեկնարկը դիմել էինք ՍԴ, որպեսզի ՍԴ դատավոր Սեդա Սաֆարյանը չմասնակցի քննությանը, սակայն ՍԴ-ն չընդունեց ձեր դիմումը: Սեդա Սաֆարյանի մասնակցությունն ի՞նչ ազդեցություն ունեցավ գործի քննության վրա:

- Ինձ թվում է՝ դա լրացուցիչ անգամ ցույց տվեց, որ ՍԴ-ն ունի կանխակալ մոտեցում, բայց վերջնական արդյունքում չեմ կարծում, որ իր մասնակցությունը նշանակություն է ունենալու, քանի որ եթե ինքը չմասնակցի էլ, միեւնույն է՝ բողոքների բավարարման համար 5 ձայն է հարկավոր, եթե ինքն էլ դուրս գար, մնալու էին 6 դատավորով: Բնականաբար, չեմ կարծում, որ ինքը մնալով քվեարկելու էր հօգուտ էս ամեն ինչին: Բայց կարծում եմ, որ հիմքերն ակնհայտ էին, որ ինքը չպետք է մասնակցեր, որոշեցին այնպես, ինչպես որոշեցին:

- ԿԸՀ-ի, ՔՊ ներկայացուցիչները ՍԴ-ում ունեի՞ն ձեր հարցերի պատասխանները, թե՝ ոչ: Նրանց արձագանքները որքանո՞վ էին բավարարում ձեզ, որքանո՞վ էին սպառիչ:

- Մեր ելույթների զգալի մասը վերաբերում էր իրենց նախընտրական կոռուպցիային, ո՛չ իրենք պարզ բացատրություն տվեցին, ո՛չ հակակոռուպցիոնը տեղից շարժվեց՝ դրանց վերաբերյալ ինչ-որ բաներ ճշտելու, ո՛չ էլ սահմանադրականի դատավորներին հետաքրքրեց դա: Շատ պարզ օրինակի վրա երեւում է դա՝ իրենք մեկ ամիս քարոզչություն են արել դրոն շոուներով եւ այլն, եւ այդ մեկ ամսվա ծախսն ավելի քիչ է, քան Երեւանում երեխաների համար կազմակերպված միջոցառման ծախսը: Իրենք չեն ներկայացրել ծախսերը, բայց պայմանական, մեր կոպիտ հաշվարկով, 400-800 մլն դրամի չափով իրենք կարող էին գերազանցել: Սրան կարելի է ավելացնել նաեւ զորահանդեսի ծախսերը, որը նույնպես քարոզչական միջոցառում է եղել: Իրենք միջոցառումը առաջ ասում էին՝ հեսա տեսեք, թե ինչ միջոցառում ենք անելու, իսկ միջոցառումից հետո ասում էին՝ տեսա՞ք ինչ միջոցառում արեցինք: Այսինքն, իրենք բերել են, այդ միջոցառումը դարձրել են քաղաքական քարոզարշավի մաս: Կարող էին անել ընդամենը ու անցնել առաջ, ասել, որ պետական միջոցառում է, դրան չենք անդրադառնում, բայց ակնհայտ է, որ իրենք այդ միջոցառումն արել են հենց քարոզչական նպատակով, ընդ որում, արել են շտապողական՝ մեկ անձից գնումով, նախապես պլանավորված չի եղել: Նույնկերպ նաեւ թոշակների բարձրացումը, երբ ընտրությունից առաջ բարձրացնում են, բայց նախապես պլանավորված չի եղել բյուջեով:

- Այսինքն՝ դուք այս պարագայում որեւէ սպասելիք չունե՞ք:

- Դժվար է այդ հարցին պատասխանելը, որպես իրավաբան՝ չեմ կարող ասել, որ սպասելիք չունեմ, ամեն դեպքում, փաստարկները լրիվ հիմնավոր են, եւ մարդիկ նայելով տեսել են, որ դրանք բավարարման ենթակա են:

Արմինե ՆԱՎՈՅԱՆ

ԱԺ

ԱԼԵՆ ՍԻՄՈՆՅԱՆԻ «ՎԵՐՋԻՆ ԴԱՍԸ» ԵՎ ԱՆՈՐՈՇ ԱՊԱԳԱՆ

Հեռացող խորհրդարանի վերջին արտահերթ նիստը երեկ աչքի ընկավ դրամատիկ տեսարաններով: Նիկոլ Փաշինյանի կողմից մերժված, ՔՊ վարչությունում Ռուբեն Ռուբինյանին պարտված, բայց դեռեւս ԱԺ նախագահի պաշտոնը զբաղեցնող Ալեն Սիմոնյանը երեկ ԱԺ նիստ էր վարում՝ ասես ոչինչ չի եղել, ինքը չի նեղացել թիմից, որ ԱԺ նախագահի պաշտոնում ոչ թե իրեն, այլ անզուսպ ու հայհոյախոս Ռուբինյանին ընտրեցին: Նա վերջին անգամ ինքնադրսեւորվեց բարձր ամբիոնից, ընդդիմադիրների հետ կոշտ լեզվակռվի մեջ մտավ, կանգնեց թիմակցի թասիբին, երբ Արծվիկ Մինասյանը Ժոկոյի աղջկան՝ Ծովինար Վարդանյանին նախատեց նախագծի քննարկման ընթացքում՝ ասելով. «Շուտով կորոշեք, թե ով հաց ուտի, ով՝ չուտի, դուք ո՞վ եք ընդհանրապես»: Ալեն Սիմոնյանը Մինասյանին կոչ արեց կոռեկտ լինել: Մինասյանն էլ հետաքրքրվեց Սիմոնյանից, թե ինչու է եկել ԱԺ: «Ի՞նչ ա նշանակում՝ դուք ինչու եք եկել: Եկել եմ, որ ձեզ աշխատավարձ ու պարգեւավճար տամ»,- իբրեւ թե խայթեց Սիմոնյանը: Եվ չնայած ցուցադրական անվրդով պահվածքին, նա դահլիճից արագ հեռացավ, եւ նրա փոխարեն դերի մեջ մտավ խորհրդարանի ապագա խոսնակ Ռուբեն Ռուբինյանը, որի նստած դիրքը, հայացքն անգամ արդեն իսկ փոխվել են: Ռուբինյանն ինքնավստահ բազմել էր դեռ փոխնախագահի աթոռին եւ փորձում էր հավասարակշռված մարդու տպավորություն թողնել, մինչդեռ այդ հարցում բոլորը վստահ են, որ դա շատ կարճ է տեւելու, եւ հենց այդ պատճառով դեմ էին նրա թեկնածությանը, բայց պարզվեց՝ Փաշինյանն այլ հաշվարկներ ու ծրագրեր ունի: Ռուբինյանը փորձում էր համարժեք վերաբերմունքի արժանացնել թե՛ ընդդիմությանը, թե՛ իր թիմին, եւ թիմակիցներին նույնպես զգուշացնում էր ելույթների համար սահմանված ժամանակը գերազանցելու մասին: Մինչ նա իրեն ԱԺ նախագահ էր զգում, Ալեն Սիմոնյանը հերթով անցնում էր խորհրդարանի բաժիններով եւ հրաժեշտ տալիս աշխատակազմին: Հետո որոշեց նաեւ այդ կարգավիճակում վերջին ճեպազրույցը տալ լրագրողներին եւ դա արեց վերջերս կառուցված երկնագույն մամուլի սրահում, որը դեռեւս չէր շահագործվել եւ պատրաստ էլ չէր՝ չուներ օդափոխման համակարգ, եւ անմարդկային շոգ էր: Բայց հավանաբար չցանկացավ, որ լրագրողների համար իր նախաձեռնությամբ ստեղծված բարեկեցիկ սրահի բացումն իր իրավահաջորդն անի, եւ իր վերջին ճեպազրույցը տվեց՝ մեկ ժամից ավելի դիմանալով այդ պայմաններին:

Նա իր խոսքում չթաքցրեց, որ թիմի որոշումն իր համար անակնկալ է եղել, ինքը ցանկացել է կրկին ԱԺ նախագահ դառնալ. «Ես ցանկացել եմ շարունակել աշխատանքս ԱԺ նախագահի պաշտոնում, սակայն գոյություն ունի վարչություն, ես ենթարկվում եմ իմ վարչությանը: Նեղվածություն չունեմ: Ենթադրում եմ՝ ինչ-որ տեղում օգտակար կլինեմ իմ պետությանը»: Սիմոնյանի խոսքերից հասկանալի դարձավ, որ նրան ոչ միայն «քցել» են ԱԺ նախագահի պաշտոնից, այլեւ որեւէ այլ պաշտոնի առաջարկ էլ չեն արել, խոստովանեց՝ ապագայի հետ կապված քննարկում չի ունեցել Նիկոլ Փաշինյանի հետ: Նա էլ Փաշինյանի պես պնդեց, որ ՀՀ նախագահի պաշտոնը զբաղեցնելու հարց չի քննարկվել: «Ենթադրում եմ՝ ինչ-որ փուլում, ինչ-որ տեղում օգտակար կլինեմ մեր երկրին, մեր կուսակցությանը: Ես վարչապետի հետ քննարկել եմ, նաեւ վարչության հետ եմ խոսել՝ չեմ վերցնի մանդատը եւ չեմ գա Ազգային ժողով՝ որպես պատգամավոր»,- հայտարարեց նա:

Օրեր առաջ մենք գրել էինք, որ Սիմոնյանը չի ցանկանում շարքային պատգամավորի կարգավիճակով խորհրդարան գնալ, հատկապես որ շարունակելու է մնալ հատուկ պետական պաշտպանության տակ գտնվող անձ եւ առաջիկա հինգ տարին թիկնապահներով է շրջելու, կեցության գումարներ է ստանալու: Հարցին, թե ինչու չգնահատվեց իր հավատարմությունը, ինչը չներեց իրեն ՔՊ թիմը, Ալեն Սիմոնյանը պատասխանեց. «Այո, կա այդպիսի տրամաբանություն, այդպիսի դեպքերը պատմության մեջ շատ են, բայց իմ հարաբերությունը, իմ վերաբերմունքը, իմ նվիրվածությունը դա իմ որոշումն է, իմ տեսակն է, եւ ես ասել եմ ու նորից եմ կրկնում՝ իմ քաղաքական գործունեությունը Նիկոլ Փաշինյանի քաղաքական գործունեության հետ համատեղ գործունեություն է, ես չեմ տարանջատում, չեմ տարանջատել ինձ որեւիցե դեպքում: Ես շարունակելու եմ պաշտպանել իմ թիմին, այն գաղափարները, այն սկզբունքները, որ ես ունեմ, մենք ունենք, եւ չեմ կարծում են, որ չարժե փոխել մեկին, ով արդեն լեզու է գտել ոչ միայն թիմի, այլեւ նոր ընդդիմության գոնե մի հատվածի՝ «Հայաստան» դաշինքի հետ:

Ալեն Սիմոնյանի դեպքը նաեւ դաս է շատերի համար, որ Նիկոլ Փաշինյանը մարդկանց օգտագործելու եւ դեն շպրտելու սովորություն ունի, ոչ մի մարդկային կապվածություն եւ պարտավորություններ չունի թիմակիցների նկատմամբ, եւ նույնը վաղ թե ուշ տեղի է ունենալու նաեւ մյուսների հետ:

ուզում, որ դուք պաշտոնով պայմանավորեք, մտածեք, որ դա պատիժ էր: Դա պատիժ չէր, ես իմ ծառայությունը կատարեցի, ես լավ կատարեցի իմ ծառայությունը, ես, այսպես ասած, պարզ ճակատով եմ ավարտում այս փուլը: Կապրենք՝ կտեսնենք, թե հետագայում ինչ կլինի: Չեմ բացառում, որ կարող է մոտակա, չգիտեմ, ինչ-որ ժամանակահատվածում ընդհանրապես որեւիցե քաղաքական պաշտոնով զբաղված չլինեմ»:

Ի դեպ, չնայած ՔՊ խմբակցությունում Ալեն Սիմոնյանով հիացած չէին, բայց երեկ ասում էին՝ «մինչեւ չգա հետինը, չի հիշվի առաջինը», եւ շատերն ափսոսանքով էին ճանապարհում Սիմոնյանին, տագնապով սպասում Ռուբինյանի ինտրիգներին ու քմահաճություններին: Թիմում կա մի ստվար խումբ, որն այս «ռակիրովկան» ամենեւին տեղին չի համարում, մանավանդ՝ հիմա, երբ ՔՊ-ն չունի սահմանադրական մեծամասնություն եւ առաջիկայում բազում խնդիրների է բախվելու, ուստի



Լուսինե ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
lusine.shahverdyan@hraparak.am

ԹՈՇԱԿՆԵՐԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԾԱԽՍԱԾ 19-20 ՄԼՐԴ ԴՐԱՄԸ ԿՎՃԱՐԵՆ ՆՊԱՍՏԱՌՈՒՆԵՐԸ

Ինչպես հայտնի է, ՀՀ կառավարությունը փոխել է անապահովության գնահատման համակարգը, ինչի հետեւանքով նպաստառու ընտանիքների թիվը կրճատվել է շուրջ 54 տոկոսով: Այլ կերպ ասած՝ մոտ 54 հազար ընտանիք, կառավարության ջանքերով ու խորամանկ հաշվարկներով, զրկվել է նպաստից:

Հայտնի է նաեւ, որ շատ ընտանիքներ նպաստառուների ցանկից դուրս են մնացել Նիկոլի տված 10 հազար դրամով թոշակի ավելացման ու անկանխիկ գնումների հետվճարների պատճառով, որոնք նոր համակարգում հաշվարկվել են որպես ընտանիքի եկամուտ: Արդյունքում այդ ընտանիքների անապահովության միավորը նվազել է:

Այսպիսով, արհեստականորեն խստացնելով անապահովության չափանիշները, գումարը կտրելով աղքատներից, իշխանությունն իբր ավելի շատ է օգնում ծայրահեղ աղքատներին: Թե որքան ընդհանուր գումար է «տնտեսվել» այս կրճատումների արդյունքում, կառավարությունը հստակ տվյալ չի հրապարակել: Սակայն եղած թվերին նայելով կարելի է կատարել մոտավոր հաշվարկ: Եթե հիմք ընդունենք, որ մինչեւ այս ռեֆորմը մոտ 100 հազար նպաստառու ընտանիք կար, ապա ստացվում է, որ նպաստից զրկվել է շուրջ 54 հազար ընտանիք: Յուրաքանչյուր ընտանիքի միջին ամսական նպաստը կազմում է մոտ 30 հազար դրամ, հետեւապես՝ 54 հազար ընտանիքի նպաստից զրկելով, նիկոլականները խնայում են ամսական շուրջ 1.6 միլիարդ, տարեկան կտրվածքով՝ մոտ 19-20 միլիարդ դրամ:

Հիմա տեսնենք, թե թոշակները 10 հազար դրամ բարձրացնելով որքան լրացուցիչ ծախս է արել կառավարությունը: Սա արդեն հրապարակված տվյալ է: Կենսաթոշակների շուրջ 10 հազար դրամով բարձրացման արդյունքում պետական բյուջեից պահանջվող լրացուցիչ տարեկան ծախսը կազմում է 78.7 միլիարդ դրամ:

Բարձրացումը վերաբերում էր շուրջ 667 հազար քաղաքացու, որոնցից մոտ 623 հազարի թոշակն ավելացել է ուղիղ 10 հազարով, մնացածինը՝ միջինը 8,5 հազարով: Ֆինանսների նախարարության տվյալներով, որոնք բերվում էին որպես այդ նախագծի հիմնավորում, այս փոփոխության ֆիսկալ բեռը պետության համար կազմում է տարեկան 78.7 մլրդ դրամ:

Ստացված թվերը համադրելով, տեսնում ենք, որ նպաստառուների կրճատումից (54 հազար ընտանիք) պետությունը մոտավոր «տնտեսում» է տարեկան 19-20 միլիարդ դրամ: Իսկ թոշակների համատարած բարձրացման վրա կառավարությունը ծախսում է տարեկան 78.7 միլիարդ դրամ, այսինքն, ամսական մոտ 6.56 մլրդ: Սա նշանակում է, որ նպաստների համակարգի խստացումից ստացված խնայողություններն արդեն մոտ 25%-ով ծածկում են կենսաթոշակների բարձրացման համար անհրաժեշտ ծախսերը:

Բայց սա դեռ վերջը չէ: Թոշակները բարձրացել են ոչ թե հունվարի, այլ ապրիլի 1-ից, ուրեմն ստացվում է, որ մինչեւ հիմա այդքան թմբկահարված, քարոզարշավի ժամանակ տժվժիկի պատմություն դարձրած այս «բարեգործության» համար կառավարությունը ոչ մի լումա չի ծախսել: Ապրիլի 1-ից մինչ այսօր՝ հուլիսի սկիզբը, անցած 3 ամիսների ընթացքում կառավարությունը թոշակների ավելացման նպատակով արդեն ծախսել է շուրջ 19.7 միլիարդ դրամ (6.56 անգամ 3): Այսինքն, կառավարությունը թոշակների բարձրացման առաջին 3 ամսում արդեն ծախսել է այնքան գումար, որքան սոցիալական նպաստների կրճատումից, եւ 54% նպաստառուների դուրս թողնելով «տնտեսում» է, այսինքն՝ 19-20 մլրդ: Այսպիսով, իր ծախսած 19-20 միլիարդը կառավարությունն արդեն հետ է ստանալու՝ աղքատներից կտրելով այս գումարը: Իսկ թե ինչ նոր տնտեսումներ է անելու առաջիկայում, ինչ խորամանկություններ է գործի դնելու, որ թոշակների բարձրացման ծախսը չազդի իր բարեկեցության վրա, կերեւա առաջիկայում:



ՀԳ. *Ինչ խոսք, ՔՊ-ական վերնախավը՝ նախարար, դատավոր, պատգամավորներ, իրենց միլիոնանոց աշխատավարձերով, աշխատավարձի հավելումներով ու պարգեւավճարներով շատ ավելի արդյունավետ կարող էին լուծել ծայրահեղ աղքատների խնդիրները, քան աղքատները, ու սոցիալական վայրիվերումներ, ցնցումներ էլ չէին լինի: Օրինակ, կարելի էր ամեն ՔՊ-ականի կցել մեկ կամ երկու ծայրահեղ աղքատ ընտանիք, որին սույն ՔՊ-ականն ամսական 100 հազար դրամ կնվիրեր: Այ, սա կլիներ հեղափոխական իշխանություն: Բայց դե, պարզ է, որ կարճ ժամանակում գերհարստացած իշխանությունը երբեք չի գնա սրան եւ ինչպե՞ս գնա, եթե օր ու գիշեր, իր ֆինանսիստներով հանդերձ, մտածում է, թե ինչպես աղքատների սերն ու ձայնը շահի, բայց նրանց վրա փող չծախսի, ֆռացնի ժողովրդին՝ իր «շուստրի» առեւտրականի ուղեղով:*

Սյուզան ՍԻՄՈՆՅԱՆ
syuzan.simonyan@hraparak.am

ԱԴՐԲԵՋԱՆՑԻՆԵՐՆ ԱՆՑՅԱԼՈՒՄ ԷԼ ԵՆ ՀԱՅԱՍՏԱՆ ԱՅՑԵԼԵԼ, ԻՐԵՆՑ ՄԱՆԿՈՒԹՅԱՆ ՎԱՅՐԵՐՈՒՄ ԵՂԵԼ

ԱՆՑՅԱԼ

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

Ադրբեջանի կրթության նախարար Միսիր Մարդանովի՝ Հայաստան, իր ծննդավայր Աղավնավանք այցի մասին նախորդ հրապարակումիցս հետո լրացուցիչ տեղեկություններ ստացա: Պարզվում է, որ այդ այցը կազմակերպել, Հայաստանից սերված ադրբեջանցի պաշտոնյաների հետ ի պաշտոնե բազում շփումներ է ունեցել ՀՀ նախկին փոխարտգործնախարար, դեսպան Արմեն Մարտիրոսյանը: Նրան խնդրեցի մանրամասներ պատմել այդ հանդիպումներից:

Արմեն Մարտիրոսյանը պատմեց. 1999թ. ձմեռն էր, որոշվել էր Եվրախորհրդի շրջանակներում կրթության նախարարների կոնֆերանսը Հայաստանում անցկացնել: Դժվար ժամանակներ էին, նման մակարդակի կոնֆերանս անցկացնելու պայմաններ չկային: Որոշվել է այն անցկացնել Ծաղկաձորում, Մերգելյան ինստիտուտի հանգստյան տանը: Կոնֆերանսին մասնակցել են Վրաստանի կրթության նախարարը, Ռուսաստանի կրթության փոխնախարարը, այլ երկրների կրթության նախարարներ եւ Ադրբեջանի կրթության նախարար Միսիր Մարդանովը ու Բաքվի ժողկրթության վարչության պետը: Հայաստանի արտգործնախարար Վարդան Օսկանյանն է համակարգել միջոցառումը, նա իր տեղակալ Արմեն Մարտիրոսյանին ուղարկել է Ծաղկաձոր: Մարտիրոսյանը Ծաղկաձորում մոտեցել է Մարդանովին, բարեւել, վերջինս մաքուր հայերենով պատմել է, որ ինքը Դիլիջանի շրջանի Սալաի (այժմ՝ Աղավնավանք) գյուղում է ծնվել, եւ հավելել է. «Մի խնդրանք ունեմ՝ ուզում եմ գնալ իմ հայրենի գյուղ, որտեղ ինստիտուտն ավարտելուց հետո չեմ եղել»: Մարտիրոսյանը չի իմացել, թե ինչ պատասխանի: Նա ռիսկի է դիմել, զանգահարել է Հրազդանում ապրող վստահելի անձանց ու նրանց խնդրել՝ իրենց «Նիվա» ավտոմեքենայով, զենքերով գալ Ծաղկաձոր: Մարտիրոսյանը սերտորեն կապված է Հրազդանի հետ, 2 անգամ այնտեղից պատգամավոր է ընտրվել: Նա տղաներին հրահանգել է Մարդանովին տանել Աղավնավանք, ժամը 17-ին հետ բերել Ծաղկաձոր, քանզի ժամը 19-ին պաշտոնական ընթրիք էր լինելու: Ձմռան երեկո է եղել, ժամը 18-ը վաղուց անցել է, սակայն Մարդանովը եւ նրան ուղեկցողները չեն վերադարձել: Այն ժամանակ բջջային կապը վատ էր աշխատում, շատ տեղերում ծածկույթ չկար, Մարտիրոսյանը կապ հաստատելու համար անգամ բարձրացել է Ծաղկաձորի մի բարձրադիր տեղանք: Վերջապես Մարդանովը եւ նրա ուղեկիցները հայտնվել են: Նրա տեսքից զգացվել է, որ Աղավնավանքում ճոխ հյուրասիրել են: Նա փաթաթվել է Ա. Մարտիրոսյանին, ասել. «Քո ցավը տանեմ, կյանքում երբեք չեմ մոռանա քո լավությունը», ու լաց է եղել: Մարդանովին՝ նրա հայրական տանն ապրողները լավ հյուրասիրել են, նա ցանկացել է լինել նաեւ իր կնոջ հայրական տանը, որը նույն գյուղում էր: Տեղացիներն ասել են, որ այնտեղ զոհվածի ընտանիք է ապրում, սակայն Մարդանովը համառել է, ուղեկցողները նրան նաեւ այդ տուն են տարել, որտեղ համեստ ընտանիք է ապրելիս եղել: Նրանք եւս հյուրասիրության սեղան են բացել: Իսկ Ծաղկաձորում նախարարների պաշտոնական ընթրիքից առաջ Մարդանովը խնդրանքով դիմել է Մարտիրոսյանին. «Խնդրում եմ՝ դաստա բերեք»: Մարտիրոսյանը զարմացել է՝ ինչ դաստա: Դաստան փոքր նվագախումբն է՝ զուռնաչի, դամ պահող, դհոլահար: Հրազդանից դաստա են բերել, քեֆը ջերմ ու ճոխ է դարձել: Հաջորդ օրը նախագահ Ռոբերտ Քոչարյանի մոտ կոնֆերանսի մասնակից նախարարների ընդունելություն է եղել, Մ. Մարդանովը նոր խնդրանքով է դիմել Ա. Մարտիրոսյանին՝ թույլ տան ինքն Ադրբեջան վերադառնա ոչ թե Վրաստանով, այլ՝ հայ-ադրբեջանական սահմանով: Ա. Մարտիրոսյանն ասել է, որ դա իր լուծելու հարցը չէ, կարող է այդ հարցով դիմել նախագահ Քոչարյանին: Մարդանովի հետ Հայաստան ժամանած Բաքվի ժողկրթության վարչության պետը, որը ծնվել, մեծացել է Սյունիքի գյուղերից մեկում, Քոչարյանի մոտ ընդունելության ժամանակ մաքուր հայերենով Պարույր Սեւակի բանաստեղծություններն է արտասանել: Մթնոլորտը փոխվել է, ջերմացել, եւ Մարդանովը, օգտվելով հնարավորությունից, Ռոբերտ Քոչարյանին ներկայացրել է իր խնդրանքը: Քոչարյանն ասել է, որ հայկական կողմից արգելք չի լինի, սակայն չի կարծում, թե ադրբեջանական կողմը դրան կհամաձայնի: Մարդանովը նախագահական սենյակից դուրս գալով՝ միջազգային կապով խոսակցություն է ունեցել Ադրբեջանի պաշտպանության նախարարի եւ այլ ղեկավարների հետ, ասել են՝ նման բան հնարավոր չէ: Մարդանովը հիասթափված դիմել է Մարտիրոսյանին. «Ես ամաչում եմ ներս մտնել, դու այդ մասին կհայտնես Ռոբերտ Քոչարյանին»:

Մարտիրոսյանը հիշեց, որ 2000թ. գարնանը, երբ ինքը, արտգործնախարար Վարդան Օսկանյանը Հայաստան ժամանած Հեյդար Ալիեւի աղջկա ամուսու՝ Ադրբեջանի փոխարտգործնախարար Մահմուդ Մամեդգուլիեւի հետ Երեւանի սրճարաններից մեկում են եղել, ինքը Մամեդգուլիեւին խնդրել է մի շիշ կոնյակ տանել Բաքու եւ հանձնել Միսիր Մարդանովին: Ադրբեջանցի պաշտոնյան հրաժարվել է. «Եթե ես տանեմ, այդ մարդը կարող է խնդիրներ ունենալ»: Արմեն Մարտիրոսյանը 2009-2013 թթ. եղել է Գերմանիայում ՀՀ դեսպանը: Գերմանիայում գյուղատնտեսական խոշոր ցուցահանդես է եղել, որին մասնակցել է նաեւ ՀՀ գյուղնախարար Սերգո Կարապետյանը: Նա դեսպան Մարտիրոսյանին ներկայացրել է Ադրբեջանի կողմից միջոցառման մասնակցին՝ գյուղատնտեսության նախարար Աբասովին, որը հետո նշանակվել է Ադրբեջանի փոխվարչապետ: Աբասովը Մարտիրոսյանի բարեւին հայերեն է պատասխանել. «Բարեւ, ախպեր: Ես Ալավերդյան փողոցի տղա եմ, Երեւանի կենտրոնում եմ ծնվել, մեծացել»: Եվ վարժ հայերենով պատմել է, որ մի քանի տարի առաջ Երեւանում իրեն հյուրասիրել են, երբ հարցրել են՝ ինչ կցանկանաս, Աբասովն ասել է, որ ցանկանում է քեֆ անել «Աղթամար» ռեստորանում, որտեղ մանուկ ժամանակ է եղել: Քեֆը շարունակել են այդ ռեստորանում: Աբասովը Մարտիրոսյանին ասել է, որ Բաքու վերադառնալով՝ ինքը երեւանյան հյուրասիրությունների մասին պատմել է նախագահ Իլհամ Ալիեւին:

Այնպես որ, անցյալում էլ են ադրբեջանցիներ եկել Հայաստան, բայց այն ժամանակ հայերը հաղթող էին ու մեծահոգի, իսկ ադրբեջանցիները՝ պարտված ու խնդրողի դերում:

ԴՊՐՈՑՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ԱՆՑՆՈՒՄ Է ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ

Արմինե ՆԱՎՈՅԱՆ

«Հանրակրթության մասին» օրենքում կատարված փոփոխություններով, մոտ մեկ տարի առաջ որոշեցին, որ 2026 թվականի սեպտեմբերի 1-ից բոլոր հանրակրթական հաստատությունները մարզային ենթակայությունից անցնելու են ԿԳՄՍ նախարարության ենթակայության տակ: 2027 թվականի սեպտեմբերի 1-ից Երեւանի քաղաքապետարանի ենթակայության դպրոցները նույնպես կգործեն ԿԳՄՍ նախարարության ենթակայությամբ: Այդ որոշումն այն ժամանակ բավականին աղմուկ բարձրացրեց, կրթության համակարգում, մարզպետարաններում եւ ԿԳՄՍՆ-ում իրարանցում առաջացավ, որովհետեւ Երեւանից՝ նախարարությունից բոլոր 1400 դպրոցների ընթացիկ կառավարումն իրականացնելը շատ բարդ է լինելու: Ժամանակին պետությունը գնում էր ամեն ինչ ապակենտրոնացնելու, մարզերն ուժեղացնելու, Երեւանը բեռնաթափելու ճանապարհով, հիմա ճիշտ հակառակն է անում՝ ամեն ինչ կենտրոնացնելով մայրաքաղաքում եւ մեկ կետից կառավարում իրականացնելով:

Քանի որ սեպտեմբերի 1-ից նոր կառավարման կարգն է գործելու, այս օրերին նախարարությունը մարզային խորհրդակցություններ է իրականացնում: Դրանք արդեն տեղի են ունեցել Գեղարքունիքի, Կոտայքի, Արարատի եւ Արմավիրի մարզերում:

Նախարարությունից հայտնում են, որ լինելու են մարզային համակարգողներ, որոնք կապող օղակ կլինեն նախարարության եւ դպրոցների միջեւ, կաջակցեն ընթացիկ աշխատանքների կազմակերպմանը, կապահովեն արդյունավետ հաղորդակցությանը եւ կնպաստեն առաջացող հարցերի արագ ու հասցեական լուծմանը: Հիշեցնենք նաեւ, որ այս իշխանությունը որոշել է մինչեւ 2028 թվականը լուծարել մարզպետարանները:

Մարզպետարանների կրթության, մշակույթի, սպորտի վարչություններում աշխատում է 4-ական աշխատակից: Մենք Արագածոտնի մարզպետի աշխատակազմի ԿՄՍ վարչության պետ **Գալուստ Թադեւոսյանից** հետաքրքրվեցինք՝ աշխատակիցների կրճատում լինելու՞ է իրենց մոտ: Ասաց, որ վարչության աշխատակիցների կրճատումներ այս պահին չեն նախատեսվում: Հարցին, թե ինչ գործառույթներ է իրականացնելու իրենց վարչությունն այսուհետ, Թադեւոսյանը հայտնեց. «Դպրոցների կառավարման վարչատնտեսական գործառույթները՝ շենքերի եւ շինությունների պահպանումը, շահագործումը, բարեկարգման աշխատանքները, ինչպես նաեւ դպրոցների բնականոն գործունեության ապահովման համար անհրաժեշտ ծառայությունները՝ անվտանգություն, մաքրություն, տեխնիկական սպասարկում, սննդի կազմակերպում, լոգիստիկ հարցեր, շարունակելու է իրականացնել մարզպետի աշխատակազմը»:

Նա նաեւ ընդգծեց, որ ավագ դպրոցների վարչատնտեսական մասի գործառույթները, որոնք այս պահին ԿԳՄՍ նախարարության ենթակայությամբ են, եւս անցնելու են մարզային ենթակայության ներքո, իսկ մարզպետի աշխատակազմն այս պահի դրությամբ շարունակելու է ակտիվ մասնակցություն ունենալ տնօրենի նշանակման, առարկայական օլիմպիադաների, մշակութային ու մարզական միջոցառումների կազմակերպման եւ մի շարք այլ աշխատանքներում:

Մեզ հետ զրույցում Տավուշի մարզպետի աշխատակազմի ԿՄՍ վարչության պետ **Մերուժան Հարությունյանը** նշեց, որ այդ պահի դրությամբ կրճատելու վերաբերյալ խոսակցություններ չկան, բայց չբացառեց, որ առաջիկայում նման անհրաժեշտություն կլինի. «Ենթադրում եմ, որ կադրերի բաժնում ինչ-որ հաստիք կկրճատվի՝ կապված տնօրենների մրցույթների հետ: Կարծում եմ՝ մարզպետարաններում էլ այս փուլում նոր հաստիքներ չեն ավելանա, այլ աշխատանքի բաժանում կանեն՝ տարբեր աշխատակիցների վրա կդրվի տարբեր մարզերի կուրացիա անելու հարցը: Նման մի լուծում պետք է գտնեն, որպեսզի կարողանան մեզ հետ համատեղ աշխատել: Առաջին փուլում նման լուծում կտրվի, կարծում եմ, որովհետեւ դժվար է ինչ-որ նոր մարդ բերել դնել, բացի այդ, հեռավորության հարց կա, իրենք Երեւանում են, մենք՝ այստեղ, տեղում ենք, մարդկանց ճանաչում ենք, ու էնպես չէ, որ ձեռքներս կլվանանք, մի կողմ կքաշվենք: Չէ, մենք էլ կօգնենք, կաջակցենք, որքանով որ կարողանանք: Կարո՞ղ է մենք չհետեւենք ուսումնական բովանդակության ճիշտ իրականացմանը, անպայման ենք հետեւելու, ո՞նց կարող ենք թողնել»:

Իսկ որքանո՞վ արդյունավետ կլինի հեռվից հանրակրթության կառավարումը: Հարությունյանը նշեց. «Գուցե զարմանաք, որ ես, լինելով վարչության պետ, ու իմ լծակը թուլանում է, բայց էդպես եմ արտահայտվում, ես կարծում եմ, որ դա շատ ճիշտ որոշում է, որ ամբողջը համակարգի նախարարությունը, թող մենք լինենք աջակցող մարմին: Աշխատակիցները մնում են իմ ենթակաները, ես այնպես կանեմ աշխատանքի բաժանումը, որ բոլորը կունենան աշխատանքային ծանրաբեռնված զբաղվածություն»:

ՍՅՈՒ

ՄԻԱԿ ԵԼՔԸ ՀԱՆՐԱՔՎԵ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՆ Է

Մի քանի օրվա համառ փորձերից հետո Նիկոլ Փաշինյանին հաջողվել է հեռախոսային կապ հաստատել Ռուսաստանի կառավարության ղեկավար Միխայիլ Միշուստինի հետ: Այդ խոսակցությունը որեւէ արդյունք չի տվել. ռուսական կողմից տարածված պաշտոնական հաղորդագրության մեջ ասվում է, որ հեռախոսազրույցը տեղի է ունեցել հայկական կողմի նախաձեռնությամբ, նկատի ունեն՝ մենք Հայաստանին ասելու բան չունենք, Փաշինյանն է խնդրել, որ խոսենք: Ինչ վերաբերում է խոսակցության բուն նյութին, ասվում է, որ «կառավարությունների ղեկավարները քննարկել են առեւտրատնտեսական, գիտատեխնիկական եւ մշակութային-հումանիտար ոլորտներում հայ-ռուսական փոխգործակցության հրատապ հարցերը»: Նույն հաղորդագրությունը, առանց հիշատակման, թե ում նախաձեռնությամբ է եղել հեռախոսազրույցը, տարածել է Փաշինյանի մամուլի ծառայությունը: Միխայիլ Միշուստինը Ռուսաստանում քաղաքականություն որոշող չէ, նա ընդամենը տնտեսական քաղաքականություն կոորդինացնող է, այնպես, ինչպես Հայաստանի կառավարությունում Միեր Գրիգորյանը: Փաշինյանը երեւի զանգել է տեղեկանալու՝ արդյոք իր ջախջախիչ ելույթից հետո ԵԱՏՄ-ն ինքնալուծարվե՞լ է, թե՞ դեռ շնչում է, Միշուստինն էլ պատասխանել է, որ ճիշտ կլինի այդ հարցն ուղղել ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինին:

Փաշինյանի հեռախոսազրույցը տեղի է ունեցել Եվրահանձնաժողովի նախագահ Ուրսուլա ֆոն դեր Լայենի՝ Հայաստան այցից մեկ օր առաջ: Նա Հայաստան է գալիս իշխանության հաղթանակը հաստատելու եւ նշելու համար: Հունիսի 7-ի խորհրդարանական ընտրությունների պաշտոնական արդյունքում հաղթող հռչակվեց իրենց պաշտպանյալը, իրենք իբրեւ թե ծանր պայքար մղեցին Ռուսաստանի եւ նրանց պրոքսի ուժերի դեմ եւ հաղթեցին հիբրիդային պատերազմում: Բայց ինչ անել այդ հաղթանակի հետ, երբ այդ հաղթանակը պահանջում է հավելյալ միջոցներ եւ ներդրումներ, իսկ իրենք պատրաստ չեն դրան:

Մինչեւ 2026 թ. մայիսը Հայաստանի իշխանությունը պրոեվրոպական էր, Հայաստանը տանում էին եվրաինտեգրման ճանապարհով, բայց երկիրը սնվում էր Ռուսաստանի հետ առեւտրի եւ տնտեսական հարաբերությունների հաշվին: Դա նման է կկվի դեպքին, երբ կկուն ձու է ածում այլ թռչնի բնում եւ փոխանակ ինքը կերակրի եւ մեծացնի իր ձագին, այդ հոգսը թողնում է բանից անտեղյակ այլ թռչունների վրա, որոնք չեն էլ գիտակցում, որ մեծացնում են ոչ թե իրենց, այլ օտարի ձագին: Մայիսից սկսած, Ռուսաստանը հրաժարվեց սնել եւ մեծացնել ԵՄ ճտի կարգավիճակ ունեցող Հայաստանի իշխանությանը, ուզում եք իրենց ճուտը լինել, թող բարի լինեն՝ իրենք էլ ձեզ կերակրեն: Արդյո՞ք ԵՄ-ն պատրաստ է իր վրա վերցնել Հայաստանի կերակրման պատասխանատվությունը, պատրա՞ստ է փոխարինել Ռուսաստանին՝ որպես Հայաստանի առեւտրատնտեսական հիմնական գործընկեր: Խոստումներ եւ հանձառություններ կան ու կլինեն, կարող են նույնիսկ մի քանի միլիոն եվրո էլ տալ, բայց որ Հայաստանի արտադրողներն իրենց ապրանքը կարողանան նույն ծավալով վաճառել ԵՄ շուկայում, չի լինի, նույնիսկ տեսականորեն է անհնար, ուր մնաց՝ գործնականում իրականանալի դառնա: Նիկոլ Փաշինյանը եւ նրա կառավարությունն անցած երկու ամսվա ընթացքում համոզվել են, որ ԵՄ-ն խոստումներից այն կողմ չի անցնելու, իսկ խոստումները կապիտալիզացնել, վերածել փողի՝ անհնար է: Խոստումներով մարդկանց կարելի է խաբել մի քանի օր, մի քանի շաբաթ եւ նույնիսկ 1-2 ամիս, հավերժ խաբել հնարավոր չէ, խաբելու եւ խաբվելու լիմիտը սպառվել է:

Ռուսաստան զանգելու կամ այնտեղ գնալու իմաստ չկա. այդ երկրի նախագահը շատ հստակ է դրել հարցը՝ կողմնորոշվեք եւ հայտարարեք՝ կա՞մ շարունակում եք մնալ ԵԱՏՄ անդամ եւ հրաժարվում եք ԵՄ-ին անդամակցելու ձեր որոշումից, կա՞մ շարունակում եք ԵՄ-ին անդամակցելու քաղաքականությունը եւ այդ դեպքում այլեւս ԵԱՏՄ անդամ չեք: Մինչեւ այդ հարցում որոշում չկայացնեք, զանգելու կամ հանդիպելու իմաստ չկա, նույնն են կրկնելու: Փաշինյանը հասկանում է դա, բայց փորձում է հնարամիտ ու ճարպիկ լինել, իրեն թվում է, թե ինքն այնքան խելոք ու համառ է, որ կարող է ճանապարհ գտնել, ի վերջո՝ եթե այդքան տարի ստացվել է, ինչո՞ւ չպետք է էլի ստացվի:

Ռուսաստանի նախագահն առաջարկել է ելքը. անցկացնել հանրաքվե եւ այդ հանրաքվեի արդյունքով որոշել, թե որ ուղղությամբ է ուզում գնալ Հայաստանը՝ ԵՄ, թե ԵԱՏՄ, թող մարդիկ իրենց վրա վերցնեն ընտրության պատասխանատվությունը, որ հետո չբողոքեն ստացված արդյունքից: 2024 թվականին չորս պրոարեւմտյան կուսակցություն ստորագրահավաք կազմակերպեց եւ 50 հազար ստորագրություն հավաքեց՝ հօգուտ Հայաստանի ԵՄ անդամակցության, եւ այդ ստորագրահավաքը հիմք ընդունելով՝ իշխանությունն օրենք ընդունեց ԵՄ անդամակցության գործընթաց սկսելու մասին: 50 հազար ստորագրողներին խոստացել էին առանց վիզայի ԵՄ գնալու հնարավորություն, ոչինչ, որ դա չստացվեց, բայց ամենակարեւորը չէին ասել, թե դրա հետեւանքն ինչ է լինելու, ինչ գին է պետք վճարել դրա համար: Հիմա այդ գինը տեսանելի է, թեեւ՝ էլի մասամբ: Բացի դա, 50 հազարը Հայաստանի բնակչության 1.5 տոկոսն է, իսկ 1.5 տոկոսը չի կարող որոշել մյուս 98,5 տոկոսի ճակատագիրը:

Եթե իշխանությունը չի ցանկանում կամ այդքան համարձակություն չունի՝ հանդես գալու հանրաքվե անցկացնելու նախաձեռնությամբ, թող այդ գործը կազմակերպի ընդդիմությունը, խորհրդարանական երկու ընդդիմադիր խմբակցությունները, որոնք 450 հազար ձայն են ստացել: Եթե, իհարկե, իրենք էլ համաձայն չեն իշխանության կողմից վարվող արտաքին քաղաքականության վեկտորի հետ:

Ավետիս ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

ՀՀ ՍԴ-Ն, ՈՐ ԳՆԱՑԵԼ Է ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՍԵՆՅԱԿ, ՈՒՆԻ՞ ԱՅՍ ՀԱՐՑԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ

Եթե ոչխարների ծնի եւ անկման հարաբերակցությունը (սալդոն) բացասական է, ապա ոչխարների թիվը չի կարող աճել: Սա գյուղական դպրոցի 3-րդ դասարանի աշակերտն էլ ձեզ կասի: Պարզ թվաբանություն է: Ենթադրենք՝ այդ աշակերտի պապն ուներ 5 ոչխար… Երկուսը ծնեցին… Դարձավ 7: Բայց սելավը 3 ոչխար տարավ: Տակը քանի ոչխար մնա՞ց… Այո՛, 4: Սալդոն բացասակա՞ն է: Բացասական է: Ոչխարների թիվը պակասեց մեկով, պատճառը սելավն էր: Պապն ի՞նչ կարող էր անել դրա դեմ: Այսպես խորհելով էլ աննկատ հասա իմ խորհրդակցությունների սենյակ…

Հիմա փորձենք հասկանալ, թե այդ ինչ է կատարվել 2021 եւ 2026 թվականների ընտրությունների միջեւ ընկած ժամանակահատվածում, որ ՔՊ-ի ընտրազանգվածը ոչ թե պակասել, այլ ավելացել է՝ 680 հազարից հասնելով 720 հազարի: Տարբերությունը՝ պլյուս 50 հազար:

2021-2026 թվականների միջակայքում մենք ունեցել ենք միայն ու միայն կորուստներ: Դրանցից շատերն անդառնալի կորուստներ էին՝ Արցախն Ադրբեջանի կազմում ճանաչելը, Արցախի հայաթափումը, նորանոր տարածքների, այդ թվում՝ նաեւ TRIPP-ի միջանցքի հանձնումը, ՀԱԵ-ի հեղինակության նսեմացման լկտի փորձերը, Հայոց ցեղասպանության ուրացումը, ոչնչով չարդարացված մարտահրավերները ավանդական դաշնակցին եւ վերպետական կառույցներին (ՀԱՊԿ, ԵԱՏՄ, ԱՊՀ եւ այլն): Այս ամենից հետո էլ ո՛չ սահմանագծում-սահմանազատումն է ավարտվում, ո՛չ էլ: Խաղաղության պայմանագիր չկա: Ավելին ասենք՝ 300 հազար ադրբեջանցի պատրաստվում է մշտական բնակության տեղափոխվել Հայաստան: Կգտնվի՞, արդյոք, մեր ազգի մեջ մի բանական արարած, որ կկարողանա մայրենի լեզվով ինձ բացատրել, թե որն է Փաշինյան Նիկոլի ընտրազանգվածի՝ 50 հազարով ավելանալու գաղտնիքը: Չկա այդպիսի մարդ, իզուր մի փնտրեք: Ավելի լավ է՝ հարցն ուղղենք անձամբ Նիկոլ Փաշինյանին: Գուցե նա կկարողանա՞ բացատրել իր ընտրազանգվածի այս անոմալ աճը: Ի վերջո, քաղաքագիտությունից հայտնի է, որ ցանկացած իշխանություն ընտրությունների միջեւ ընկած ժամանակահատվածում միայն կորցնում է, առաջ բերում շատ ավելի մեծ թվով հասարակական խմբեր, որոնք չեն ընդունում իր վարած քաղաքականությունը: Թրամփը կորցրել է, Մակրոնը կորցրել է, Պուտինը կորցրել է, Զելենսկին կորցրել է, բայց Նիկոլը, այ քեզ զարմանք, ավելացրել:

Ի դեպ, ՀՀ ՍԴ-ն, որ հեռացել է խորհրդակցական սենյակ՝ մտորելու, ունի՞ այս հարցի պատասխանը, այդ ինչպե՞ս պատահեց, որ ամեն ինչ ձախողած Նիկոլ Փաշինյանն ավելացրեց իր ընտրողների թիվը: Իմ հաշվարկներով, Նիկոլին ձայն կարող էին տալ Նիկոլը (+ ընտանիք), ՔՊ-շնիկները (պլյուս-մինուս ընտանիք եւ պարգեւավճար), պետական աշխատողները (պլյուս-մինուս ընտանիք եւ պարգեւավճար): Այսքանը կկազմեր Նիկոլի ստացած ձայների ընդամենը 10 տոկոսը, այսինքն՝ 72 հազար «օրգանիկ» քվե: Հետեւաբար, պետք է ընդունել, որ մնացած 650 հազար ձայնն «ընտրակաշառքով» կամ խաբեությամբ ստացված ձայներ են: Ու դեռ կասկածներ կան, որ այդ ձայների մի ստվար մասն էլ Հովակիմյանի հանճարեղ նկարչության արդյունք է: Այնքան անշնորհք է նկարել, որ վերջում ԲՀԿ-ի 60 հազար ձայնը կորցրել են, որպեսզի ՔՊ-ն 64 աթոռ կա՞մ՝ 2/3 մեծամասնություն ունենա խորհրդարանում: Ընդդիմությունը մեռավ ասելով, որ Փաշինյանը բյուջեի փողերն ընտրություններից 2 ամիս առաջ ուղղակի շաղ է տվել մեր ամենաընչազուրկ խավի՝ թոշակառուների շրջանում՝ չունենալով ոչ այդ իրավունքը, ոչ էլ այնքան փող, որ հետո կարողանա կարկատել ճղված բյուջեն: Մինչդեռ մեր թոշակառուների թիվն անցնում է 650 հազարից:

Պապիկյան Սուրեն, ի՞նչ ես կարծում, խորհրդակցական սենյակ հեռացած ՍԴ-ն գոնե հեռավոր պատկերացողում ունի՞ այն մասին, թե անձամբ դու քանի քվե ես բերել Նիկոլին: Նկատի ունեմ՝ բանակը, որի զինվորները, ինչպես ականատեսներն են պնդում, քվեարկել են՝ որտեղ պատահի, քանի անգամ պատահի եւ մինչեւ որ ժամը պատահի: Շատ խելք պետք չէ, կարծում եմ, մտածելու համար, որ դու, պարոն Պապիկյան, 100, 200 հոգանոց զինվորական խմբերին կարող էիր պտտել տարբեր ընտրատեղամասերով, տարբեր անուն-ազգանունների տակ ստորագրել տալ եւ 16 համարի քվեաթերթիկով մտցնել քվեախցիկ: Մի տեղամասում էլ, ի դեպ, այնքան էիք ուշացել, որ Հովակիմյանն ստիպված, «իր որոշումով», երկարաձգել էր ընտրության ավարտը: Եվ Պապիկյանի նման «ֆրուկտին» ՍԴ-ն չի՞ բարեհաճում հրավիրել «հարցաքննության»:

Ինչեւէ, իրականությունն այն է, որ այս պահին ՔՊ-ի անվան դիմաց արձանագրված է 726 հազար ձայն՝ նախկին 680 հազարի փոխարեն: Ասել է, թե՝ աճը գերազանցել է անկումին, եւ սալդոն ավելի քան դրական է: Մեր հույսը հիմա սահմանադրական բարձր դատարանն է: Եթե ՍԴ-ն համարի, որ սա նորմալ է, ապա կարելի է ասել, որ մի քանի հարյուր հազար ձայների կեղծումն ու մանիպուլյացիան այնքան չնչին են, որ չէին կարող ազդել 2026թ. հունիսի 7-ի ընտրությունների արդյունքի վրա:

ՀԳ. *Ասում եմ՝ չհեռանա՞մ խորհրդակցական սենյակ, պառկեմ դիվանին ու երկա-երկար նայեմ առաստաղին… Մեկ էլ տեսար առաստաղից 3 խնձոր ընկավ. մեկը՝ Թրամփին, մեկը՝ Մակրոնին, մեկն էլ՝ Հայաստան ժամանած եվրոպացի կնոջը, որ տասնյակ միլիոններ դրեց ՔՊ-ի տակ՝ ընտրությունները հորով-մորով անելու համար:*

Էդիկ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ
edik.andreasyan@hraparak.am

ԱՍՏՎԱԾ ՄԻ ԱՐԱՍՅԵ, ԵԹԵ ՊՆ-ՈՒՄ ԴԻԶՎԱՌԵԼԻՔԻ ԽՆԴԻՐ ՈՒՆԵՆԱՆՔ

*«Հայաստանը ես եմ» նախաձեռնության հիմնադիր, տնտեսագետ **Նաիրի Սարգսյանի** հետ փորձեցինք հասկանալ, թե ինչ հետեւանքներ կարող է առաջացնել Ռուսաստանի հետ հարաբերությունների լարվածությունը:*

Հայկա ԱԼՈՅԱՆ

- Ռուսաստանն արգելք է դրել գյուղմթերքի, ալկոհոլի ներմուծման եւ դիզվառելիքի արտահանման վրա: Ի՞նչ խնդիրների կարող ենք առնչվել, արդյոք Ադրբեջանից վառելանյութի ներկրումը կարո՞ղ է մեղմացնել այն բացը, որն առաջանալու է:

- Ադրբեջանից եկողի մասին խոսքերը շատ չափազանցված են, որովհետեւ դա ադրբեջանական չէ: Ադրբեջանը հազիվ հասցնում է իր ներքին սպառման համար արտադրել: Վերավաճառք է իրականացնում: Դիվառելիքի արտահանման արգելքի հետ կապված լավ նորությունն այստեղ այն է, որ ՌԴ նախագահը նշեց՝ դա դեռեւս չի վերաբերում ԵԱՏՄ անդամ երկրներին: Այսինքն, ունենք այդպիսի ռիսկ, որ մի օր կկանգնենք դրա առաջ, բայց դեռեւս չի սպառնում՝ այս պահի դրությամբ: Հաջորդ լավ նորությունն այն է, որ վառելիքի շուկան արագ կարող են դիվերսիֆիկացնել Իրանի Իսլամական Հանրապետության հետ, այսինքն՝ հնարավոր տարբերակներից մեկն է, իհարկե՝ սակագնի եւ որակի առումով դեռ վաղ է որեւէ բան ասել: Բայց այս պահին, օրինակ, Սյունիքի հատվածում մանրածախ վաճառք իրականացնողները գնում են Իրանի Իսլամական Հանրապետությունից, եւ կան խոշոր կազմակերպություններ Հայաստանում, որոնք մեծ պատվեր են տալիս Իրանին, եւ իրենք իրենց համար, իրենց սպառման համար նաեւ ներկրում են: Վառելիքի հետ կապված՝ որոշակի մեղմացուցիչ հանգամանքներ գոյություն ունեն, բայց գլոբալ ռիսկը դեռեւս մնում է բաց:

- Ո՞րն է այդ գլոբալ ռիսկը:

- Եթե հանկարծ Հայաստանը կանգնի վառելիքի դեֆիցիտի առջեւ, մենք կունենանք շատ լուրջ խնդիրներ՝ կապված սեզոնայնության հետ, առաջին հերթին: Հիմա գյուղատնտեսության ակտիվ փուլն է՝ բերքահավաք, այնուհետեւ՝ աշնանացան, իսկ գյուղատնտեսական տեխնիկան աշխատում է դիզվառելիքով: Ունենում ենք խնդիր նաեւ արտահանումների եւ ներկրումների իրականացման հետ կապված, այսինքն՝ բեռնափոխադրումների մեծ մասն աշխատում է դիզվառելիքով, եւ եթե առաջանում է դեֆիցիտ, բնականաբար, ունենում ենք լոգիստիկայի շղթայի կանգ եւ սակագների թանկացում, ինչը չի կարող ապրանքների եւ ծառայությունների արժեքների վրա չազդել: Օրինակ, նույն հացի վաճառքի սակագնի մեջ ներառված են նաեւ հացի փռից մինչեւ մանրածախի վայր հասցնելու ճանապարհային ծախսերը, պատկերացրեք՝ դա թանկանում է, դա չի կարող հացի գնի վրա ազդեցություն չունենալ. 100 դրամանոց հացը դառնում է 110 դրամ, օրինակ: Իսկ գյուղատնտեսության վրա շատ ծանր հետեւանքներ կունենա: Մյուսը, Աստված մի արասցե, տարածաշրջանը դեռեւս տուրբուլենտության մեջ է գտնվում, պաշտպանական համակարգում եթե ունենանք կարիքներ կամ դիզելային վառելիքի անբավարարություն:

- Փաշինյանը հայտարարեց, որ Ռուսաստանի կողմից կիրառվող տնտեսական սահմանափակումները որեւէ կերպ չեն ազդել Հայաստանի տնտեսության վրա: Հայաստանի տնտեսությունն իսկապե՞ս այդքան ինքնաբավ է:

- Իհարկե՝ ոչ: Նիկոլ Փաշինյանն ի՞նչ գիտի՝ ինչքանով են ազդել, ինչքանով չեն ազդել: Հայաստանի տնտեսության վրա այնքանով են ազդել, որ մենք ունենք վերաարտահանումների արդեն լուրջ ծավալների նվազում՝ սկսած տրանսպորտային միջոցների վերաարտահանումներից, որ տեղափոխվեց այլ երկրներ՝ Ուզբեկստան, Ղազախստան եւ այլն, շարունակելով երկակի նշանակության ապրանքներով, երբ արդեն միջնորդ հարթակ են դիտարկվում Միացյալ Արաբական Էմիրությունները, Թուրքիան, նույնիսկ որոշակի չափով՝ Վրաստանը եւ Ադրբեջանը, բայց ո՛չ Հայաստանը: Այստեղ մենք ունեցանք շատ լուրջ կորուստներ: Հաջորդ խնդիրն էկոնոմիկայի ոլորտում ռուսական սահմանափակումներն են, այսինքն՝ Հայաստանի արտադրական ամբողջ ներուժն ուղղակի ոչնչացվում է: Պատկերացրեք, ձկնաբուծարանները, ջերմոցային տնտեսությունները, այլ տնտեսական, թեկուզ ավանդական գյուղատնտեսական ծրագրեր հաջորդ տարի ուղղակի չեն կարող գործել՝ մի պարզ պատճառով. դրանք՝ բոլորը, գտնվում են վարկային բեռի տակ, եւ եթե մի քանի ամսով նրանց վաճառքները դադարեցվում են, նշանակում է, որ վարկային բեռը չեն կարող սպասարկել: Եվ գրավի առարկաները, բնականաբար, անցնում են բանկերին, աշխատակիցներին աշխատանքից ազատում են, եւ նոր ֆինանսական հնարավորություն մի քանի ամսից կամ մեկ տարուց ուղղակի չի լինում: Այդ թվում գյուղացիական տնտեսությունները, տնային տնտեսությունները գարնանային շրջանը մեկնարկում են հենց վարկով, նույն սածիլների, ջրի ոռոգման, էտելու, պարարտանյութերի համար վարկ են վերցնում, որպեսզի անհրաժեշտ բոլոր ձեռքբերումները կատարեն, բերք ստանան, վաճառեն ու կարողանան վարկի մարում իրականացնել: Հիմա, եթե այս տարվա վարկի մարումը չիրականացնեն, չեն կարողանա հաջորդ գարնան գյուղատնտեսական աշխատանքները կատարել:

- ԵՄ-ն 35 միլիոն եվրոյի աջակցություն է տրամադրում, դա չի՞ փրկելու իրավիճակը:

- Եկեք համեմատենք: Գյուղատնտեսական արտադրանքի արտահանումը մոտավորապես 1 միլիարդ դոլարի շրջանակում է: 1 միլիարդ եւ 35 միլիոն՝ կարո՞ղ է մեղմացուցիչ հանգամանք դիտարկվել, իհարկե՝ ոչ: Երկրորդ հարցը. ԵՄ-ն տրամադրում է ինչի՞ համար՝ գյուղատնտեսության զարգացման, շուկաների դիվերսիֆիկացման, բնականաբար, դրանց վերաբերյալ չի կարող: Միգուցե այստեղ ձեւակերպեն, որ դրա համար են տրամադրում, բայց այդպիսի բան երբեք չեն անում: Մյուս հարցն այն է, թե ինչ եղանակով են տրամադրում՝ վարկային միջոցնե՞ր են, թե՞ ուղղակի օգնություն, որովհետեւ շատ դեպքերում դա էլ են թաքցնում: Ինչո՞ւ. որովհետեւ 35 միլիոնը, եթե 10 տոկոս տոկոսադրույքով տրամադրում է, դուրս է գալիս, որ 38 միլիոն մոտավորապես պետք է հետմարում իրականացնել, ընդ որում՝ միայն մեկ տարվա մասին է, այսինքն, տարեկան 3 միլիոնով պետք է ավելանա: Բայց խնդիրն այն է, որ փողը մենք մի կողմից ստանում ենք, բայց մյուս կողմից չենք կարողանում դա ստանալ ու վաճառել: Պատկերացրեք, որ դուք ունեք փող, բայց շուկայում չկա ապրանք, որը կարող եք գնել ու սպառել, ինչն ամենօրյա կենսական անհրաժեշտություն է: Մի անգամ մենք եղել ենք այդպիսի իրավիճակում՝ 1990-ականներին: Շատ գյուղական համայնքներում զարգացած էր անասնաբուծությունը, կամ բուսաբուծական աշխատանքներ էին կատարում, հնարավոր էր լինում մի պահ վաճառք իրականացնել՝ փող լինում էր, բայց ձեռքբերման ենթակա ապրանք չէր լինում: Հագուստի դեֆիցիտ կար՝ շատ լավ հիշում եմ: Մարզային շրջաններում ուտելիքի շատ լուրջ դեֆիցիտ կար, այսինքն՝ փողը կար, բայց չէիր կարողանում ապրանք առնել: Հիմա պատկերացրեք՝ մեր արտադրողը գյուղատնտեսությունն է, գյուղատնտեսությունից անցում ենք կատարում վերամշակող արդյունաբերության, եւ որոնք արտահանման հաշվին գոյատեւողներ են: Իսկ մենք այլ շուկա դեռեւս չունենք, ու մոտ ապագայում չի էլ երեւում, թե որտեղ կարող ենք ունենալ: Մարդիկ սկսելու են չարտադրել, եւ 35 միլիոն բերելու ենք, տարին էլ 4 միլիոն հետ են վճարելու միայն տոկոսավճար, բայց ապրանք չենք ունենալու, որ առնենք; Ինչ ենք անելու այդ 35 միլիոնը, մեր ինչի՞ն է պետք դա:

- Այս բոլոր խնդիրներին գումարվում է նաեւ սոցիալական խնդիրը: Պարզվում է, որ թոշակներն ավելացրել են՝ նպաստները կտրել: Ինչ այլ խնդիրներ կարող է առաջացնել թոշակների չնախատեսված բարձրացումը:

- Դուք ասացիք 35 միլիոնի մասին, չի բացառվում, որ դա թոշակների, առողջապահության համընդհանուր ապահովագրության համակարգի պատճառով առաջացած դեֆիցիտը, այլ կանխատեսելի բյուջետային մուտքերի կրճատումները լրացնելու համար է, որոնք Ռուսաստանի պատժամիջոցների ֆոնին կարող են լինել, չի բացառվում, որ դրանց փոխհատուցման մասին է խոսքը: Ինչ վերաբերում է սոցիալական վճարներին, այստեղ պետք է, հանուն արդարության, երեւույթն ավելի լայն բացենք. ես կողմ չեմ անընդհատ սոցիալական նպաստներ վճարելուն, կողմ եմ հետեւյալ մոդելին. պետության պարտականությունն է՝ բոլորի համար ստեղծել արժանապատիվ, բարձր վարձատրվող աշխատատեղեր: Պետության ուղղակի եւ անուղղակի ֆունկցիան է մարդկանց աշխատանքով ապահովելն ու արժանապատիվ կյանքի համար պատասխանատվություն ստանձնելը: Կողմ եմ տրամադրելուն սոցիալական վճարներ միայն մի դեպքում, երբ պետությունն իր պարտականությունը չի կատարում՝ այդ ժամանակ պետք է տրամադրի: Բայց արդեն բարձր՝ ոչ թե 30 հազար, այլ՝ 200 հազար դրամ, որովհետեւ հիմա, երբ մենք շուկայի հետազոտություն ենք իրականացնում, շատ են դեպքերը, երբ մարդիկ զուտ նպաստից չզրկվելու համար հրաժարվում են որեւէ տեղում աշխատելուց: Այսինքն՝ արդարության այդ պահը պահենք: Մի կողմից, կամ պետք է չլինի, կամ հնարավորինս քիչ շրջանակների վերաբերելի լինի, բայց պետությունը պետք է իր պարտականությունները կատարի: Հիմա, հաշվի առնելով, որ պետությունը բարեկեցության եւ արժանապատիվ ապրուստի իր առաքելությունը չի կատարել, նշանակում է՝ սոցիալական նպաստը պետք է շարունակի վճարել, ընդ որում՝ ավելի բարձր: Իսկ հենց կատարեց, արդեն կարելի է մտածել կրճատման մասին:

ՎԵՐԱԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄԻՑ «ԿՏՐՎԱԾՆԵՐԻ» ԹԻՎԸ ԹԱՔՑՆՈՒՄ ԵՆ

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

Հունիսի 15-ին հարցում եմ արել ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանին. «Ապրիլի 26-ին ատեստացիայի լրացուցիչ փուլ է անցկացվել հանրակրթական դպրոցների այն ուսուցիչների մասնակցությամբ, ովքեր նախկինում 2 եւ ավելի անգամ բացասական արդյունք են ունեցել ատեստավորումից: Լրացուցիչ այդ ատեստացիան կամավո՞ր, թե՞ պարտադիր է եղել նախկինում 2 եւ ավելի անգամ բացասական արդյունք ունեցած ուսուցիչների համար: Քանի՞ ուսուցիչ է մասնակցել այս փուլին, քանի՞սն է դրական արդյունք ունեցել, բացասական արդյունք ունեցածները շարունակելո՞ւ են աշխատել հանրակրթական դպրոցներում»: ԿԳՄՍ փոխնախարար Արթուր Մարտիրոսյանը պատասխանել է. «Հաշվի առնելով կամավոր ատեստավորման միջոցով ուսուցչի մասնագիտական աճին նպաստելու գործընթացի կարեւորությունը՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը նախատեսել է 2026 թ. ապրիլի 25-ին շուրջ 200 ուսուցչի համար կազմակերպել կամավոր ատեստավորման գործընթաց՝ որպես լրացուցիչ փուլ այն ուսուցիչների համար, որոնք երկու անգամ (2024 եւ 2025 թթ.) չեն հաղթահարել կամավոր ատեստավորումը կամ ՀՀ կառավարության 2022 թ. ապրիլի 28-ի N 596-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջի համաձայն՝ վերաատեստավորման արդյունքում 50-59 տոկոս արդյունք չեն ցուցաբերել կամ նախորդ ատեստավորման ամենաբարձր արդյունքի նկատմամբ 15 տոկոսային կետ աճ չեն ապահովել եւ զրկվում են տվյալ առարկայի դասավանդման իրավունքից, իսկ միայն տվյալ առարկան դասավանդելու դեպքում ենթակա են ազատման»: Նախարարի տեղակալը չի պատասխանել հարցին, թե շուրջ 200 ուսուցչից վերաատեստավորման այդ փուլում քանիսը 50-59 տոկոս արդյունք չեն ցուցաբերել կամ նախորդ ատեստավորման ամենաբարձր արդյունքի նկատմամբ 15 տոկոսային կետ աճ չեն ապահովել: Կարող եմ ենթադրել, որ վերաատեստավորումից «կտրվածների» թիվը շատ մեծ է, ուստի չեն ուզում այն հանրայնացնել:

ՄԻԱՅՆ ԱՆՈՂԻՆՆ ԵՆ ՊՈԽՈՒՄ, ԹԵՐ ՆԱԵՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

2026-2027 ուսումնական տարում առարկան ներդրվում է 5-րդ եւ 10-րդ դասարաններում: Մինչ այս առարկայի ներդրման ավարտը, դպրոցներում շարունակելու են դասավանդել «Նախնական զինվորական պատրաստություն» առարկան, իսկ նախագծի ավարտից հետո ՆԶՊ-ն դպրոցում չի դասավանդվի: Զրուցել ենք կրթության փորձագետ **Վանո Կարապետյանի** հետ:

- Այս իշխանությունը «Հայոց պատմությունը» դարձրեց «Հայաստանի պատմություն», բանակի թվակազմը կրճատեց, հիմա էլ փորձում են ՆԶՊ-ն հանել դպրոցից, իսկ Հայաստանի անվտանգության երաշխավորը դարձել է Ադրբեջանը: Կարծում եք՝ այս ամենն արվում է, քանի որ Հայաստանը գնում է խաղաղության ճանապարհով:

- Կրթական բարեփոխումները պետք է նախեւառաջ գնահատվեն մասնագիտական չափանիշներով: Միաժամանակ, հանրության շրջանում բնական հարցեր են առաջանում՝ արդյոք ՆԶՊ առարկայի անվան եւ բովանդակության փոփոխությունը չի հանգեցնի նախնական զինվորական պատրաստության բաղադրիչի թուլացման: Եվ ուշադրության է արժանի նաեւ այն, թե «Նախնական զինվորական պատրաստություն» առարկան «Անվտանգ կենսագործունեություն» անվամբ փոխարինելու արդյունքում իրականում ինչ է փոխվելու՝ ինչ ենք կորցնելու: Եթե փոփոխությունը միայն անվանափոխությունն է, եւ նոր առարկան պահպանելու է ՆԶՊ-ի ողջ բովանդակային հիմքը՝ ներառյալ հայրենասիրական դաստիարակություն, քաղաքացիական պատասխանատվություն, զինվորական ծառայությանը նախապատրաստող գիտելիքներ ու գործնական հմտություններ, ապա այն կարելի է դիտարկել որպես կրթական ծրագրի արդիականացում: Սակայն մտահոգությունն առաջանում է, երբ անվանափոխությունն ուղեկցվում է բովանդակային նահանջով: «Նախնական զինվորական պատրաստություն» հասկացությունը պարունակում էր պետության պաշտպանության, բանակ-հասարակություն կապի եւ ապագա քաղաքացու անվտանգության պատասխանատվության գաղափարը: Եթե այդ բաղադրիչը թուլացվի, ապա կարող է տուժել ոչ միայն առարկան, այլեւ՝ սովորողների մոտ ձեւավորվող ազգային անվտանգության ընկալումը: Այս հարցը հանրության մի հատվածի կողմից դիտարկվում է ավելի լայն քաղաքական համատեքստում՝ հաշվի առնելով վերջին տարիների գործընթացները՝ բանակի թվակազմի կրճատման, անվտանգության քաղաքականության փոփոխության, ինչպես նաեւ կրթական ոլորտում ազգային բովանդակություն ունեցող որոշ առարկաների անվանափոխությունների շուրջ քննարկումները: «Հայոց պատմություն» առարկայի անվան փոփոխությունը «Հայաստանի պատմություն» ձեւակերպմամբ, եւս առաջացրեց հասարակական քննարկումներ՝ կապված պատմական ինքնության եւ պետական մտածողության ձեւավորման հետ: Կրթությունը միայն գիտելիքների փոխանցման համակարգ չէ. այն նաեւ պետության արժեքային եւ քաղաքացիական համակարգի ձեւավորման գործիք է: Այդ պատճառով ցանկացած փոփոխություն, որը վերաբերում է ազգային ինքնությանը, պատմական հիշողությանը կամ անվտանգությանը, պետք է իրականացվի առավելագույն մասնագիտական հիմնավորմամբ եւ լայն քննարկումներով:

- «Անվտանգ կենսագործունեություն» առարկայի բացասական եւ դրական կողմերը որո՞նք են:

- ԿԳՄՍՆ-ն արդեն հայտնել է, որ փոփոխություններ եւ լրացումներ են կատարվել գործող չափորոշչում, եւ «Նախնական զինվորական պատրաստություն» առարկան այսուհետ կկոչվի «Անվտանգ կենսագործունեություն»: Ներդրումից հետո ՆԶՊ առարկան դուրս կգա հանրակրթական ծրագրից: Այս մոտեցումը հիշեցնում է նախկինում «Ինֆորմատիկա» առարկան «Թվային գրագիտություն եւ համակարգչային գիտություն» առարկայով փոխարինելու փորձը, որի ընթացքում նույնպես առաջացան բազմաթիվ մասնագիտական եւ կազմակերպչական խնդիրներ: Հիշեցնեմ, որ դպրոցներում «Ռազմագիտություն» առարկան դեռեւս 2007-ին փոխարինվեց «Նախնական զինվորական պատրաստություն» անվանմամբ: Դա հիմնավորված փոփոխություն էր, քանի որ շեշտադրումը տեղափոխվեց ոչ միայն տեսական գիտելիքների, այլեւ գործնական կարողությունների ձեւավորման վրա: 2021-ից ՆԶՊ առարկան ընդգրկվեց «Նախնական զինվորական պատրաստություն եւ անվտանգ կենսագործունեություն» ուսումնական բնագավառում: Սա նույնպես տրամաբանական լուծում էր, քանի որ դպրոցի ՆԶՊ ուսուցիչը՝ զինղեկը, միաժամանակ իրականացնում է դպրոցի քաղաքացիական պաշտպանության շտաբի պետի գործառույթներ, պատասխանատու է քաղպաշտպանության կազմակերպման, արտակարգ իրավիճակներին պատրաստվածության եւ աղետների ռիսկերի կառավարման համար: Հետեւաբար, անվտանգության բաղադրիչն արդեն իսկ ներառված էր գործող համակարգում եւ նոր երեւույթ չէ: Այսօր գործող օրենսդրությամբ, ՆԶՊ առարկան դասավանդելու իրավունք ունեն բարձրագույն կրթություն եւ սպայական կոչում ունեցող անձինք: Գործնականում առարկան դասավանդում են պահեստազորի կամ թոշակի անցած զինվորականներ, սպայական կոչում ունեցող ոստիկանության եւ այլ ուժային կառույցների նախկին ծառայողներ, ինչպես նաեւ՝ զինվորական ամբիոններում սպայական կոչում ստացած մանկավարժներ: Միեւնույն ժամանակ, չի կարելի յուրաքանչյուր փոփոխություն ինքնաբերաբար կապել որեւէ քաղաքական նպատակի հետ: Ավելի ճիշտ է գնահատել արդյունքը՝ նոր համակարգն ուժեղացնո՞ւմ է, թե՞ թուլացնում սովորողի՝ որպես պատասխանատու քաղաքացու, հայրենիքի եւ պետության անվտանգության նկատմամբ գիտակցված վերաբերմունքը: Ի վերջո, խնդիրը ոչ թե առարկայի անվան մեջ է, այլ այն հարցում, թե ինչ քաղաքացի է ձեւավորում դպրոցը: Եթե «Անվտանգ կենսագործունեությունը» կարողանա համատեղել ժամանակակից անվտանգության գիտելիքները եւ պահպանել ազգային պաշտպանունակության գիտակցումը, ապա փոփոխությունը կարող է արդյունավետ լինել: Եթե ոչ՝ այն կարող է վերածվել միայն ձեւական վերանվանման գործընթացի:

- Առարկան դասավանդելու համար նոր մասնագետներ պատրաստվելո՞ւ են:

- ԿԳՄՍՆ հաղորդագրության համաձայն՝ մինչեւ սեպտեմբերի 1-ը նախատեսվում է կազմակերպել ՆԶՊ ուսուցիչների վերապատրաստում, որի արդյունքում նրանք կվերապրոֆիլավորվեն որպես «Անվտանգ կենսագործունեություն» առարկայի ուսուցիչներ: Այսինքն՝ առայժմ խոսք չի գնում նոր մասնագետների լայնածավալ պատրաստման մասին, այլ նախատեսվում է աշխատել գործող կադրերի վերապատրաստման ուղղությամբ: Սակայն երկարաժամկետ հեռանկարում անհրաժեշտ կլինի նաեւ բուհերում ներդնել համապատասխան մասնագիտական կրթական ծրագրեր, քանի որ միայն վերապատրաստումներով հնարավոր չէ ապահովել նոր առարկայի կայուն եւ որակյալ դասավանդումը: Առարկայի ներդրման հաջողությունը պետք է գնահատել ոչ թե նրանով, որ այն պաշտոնապես ներառվել է ուսումնական պլանում, այլ՝ նրանով, թե արդյո՞ք նախարարությունը ժամանակին կապահովի որակյալ դասագրքեր, ուսումնաօժանդակ ձեռնարկներ, մեթոդական նյութեր եւ վերապատրաստված ուսուցիչներ: Եթե այս բոլոր փուլերը կատարվեն շտապողականությամբ, ապա մեծ է հավանականությունը, որ առաջին հերթին կտուժի դասագրքերի որակը: Իսկ կրթության ոլորտում սխալներն ավելի ուշ են երեւում, բայց հետեւանքները երկարաժամկետ են: Ուստի, եթե նախարարությունը նպատակ ունի ներդնել իսկապես արդյունավետ եւ ժամանակակից «Անվտանգ կենսագործունեություն» առարկա, ապա առաջնահերթությունը պետք է լինի ոչ թե բարեփոխման արագությունը, այլ՝ որակը: Ավելի նպատակահարմար է ունենալ ուշ, բայց մասնագիտական բարձր չափանիշներին համապատասխան դասագիրք, քան սահմանված ժամկետում ներդրված, սակայն թերի եւ վերամշակման կարիք ունեցող ուսումնական նյութ: Առանձին հարց է նաեւ դասագրքերի պատրաստման իրատեսական ժամկետը: Եթե առարկայի ներդրումը նախատեսվում է 2026-2027 ուստարվանից, ապա բնական հարց է առաջանում՝ հնարավո՞ր է արդյոք ընդամենը 2 ամսվա ընթացքում մշակել, փորձաքննել, խմբագրել, հաստատել, տպագրել եւ դպրոց հասցնել որակյալ դասագրքեր: Իմ գնահատմամբ՝ ժամկետը չափազանց սեղմ է: Ժամանակակից դասագիրք ստեղծելը միայն տեքստ գրելը չէ: Այն ներառում է կրթական չափորոշչին համապատասխան բովանդակության մշակում, մեթոդական լուծումների ընտրություն, մասնագիտական եւ գիտամեթոդական փորձաքննություն, փորձնական կիրառման հնարավորություն, խմբագրական աշխատանք, ձեւավորում, տպագրություն եւ ուսուցիչների համար ուղեցույցի պատրաստում: Եթե ԿԳՄՍ նախարարությանը չհաջողվի մինչեւ ուսումնական տարվա մեկնարկը դպրոցներին ապահովել «Անվտանգ կենսագործունեություն» առարկայի դասագրքերով եւ անհրաժեշտ ուսումնամեթոդական նյութերով, ապա մեծ է հավանականությունը, որ կկրկնվի «Թվային գրագիտություն եւ համակարգչային գիտություն» (ԹԳՀԳ) առարկայի ներդրման փորձը, երբ առարկան ներդրվեց դպրոցում, սակայն դասագրքերը ժամանակին պատրաստ չէին, ինչի հետեւանքով ուսուցիչները ստիպված էին դասավանդել ժամանակավոր նյութերով, սեփական նախաձեռնությամբ մշակված ռեսուրսներով կամ մեթոդական ցուցումներով: Նման իրավիճակում փաստացի ստացվում է, որ դպրոց է մտնում ոչ թե ամբողջությամբ պատրաստված նոր առարկա, այլ դրա գաղափարը, եւ նույն առարկան տարբեր դպրոցներում, տարբեր ուսուցիչների կողմից դասավանդվում է տարբեր բովանդակությամբ եւ մոտեցումներով, ինչը հակասում է ՀՊՉ-ի տրամաբանությանը:

Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական հարթակում՝ Ի-դրաֆտում, հանրային քննարկման դրված նախագծով առաջարկվում է «Անվտանգ կենսագործունեություն» նոր առարկա ներդնել՝ փուլային սկզբունքով:

Նելլի ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԵՍ ԱՅՍՏԵՂ ԵՄ, ՈՐ ՁԵԶ ՊՈԿԵՄ ՌՈՒՍՆԵՐԻՑ

Եվրոպական հանձնաժողովի նախագահ Ուրսուլա ֆոն դեր Լայենը երեկ Բաքվից ժամանեց Երեւան: «Ես այսօր այստեղ եմ՝ նաեւ աներկբա հայտարարելու, որ եթե Ռուսաստանը փակի իր շուկան Հայաստանի արտադրանքի համար, Եվրոպական Միությունը կբացի դուռը հայկական ապրանքների արտադրատեսակների համար՝ Եվրոպական Միության 450 միլիոնանոց սպառողների շուկայում: Մենք ուզում ենք սատարել մեր բարեկամներին, մենք ուզում ենք սատարել խաղաղության պրոցեսին, որն ընթանում է, ինչի համար ցանկանում եմ գնահատանք հայտնել Ձեզ»,- ասել է տիկինը՝ ավելացնելով, որ այդ ներդրումների նպատակով հատկացվել է 200 միլիոն եվրո, որը հետագայում կարող է հասնել մինչեւ 2 մլրդ եվրոյի: «Սրանք կարեւոր են այս տարածաշրջանում փոխկապակցվածության համար»,- ասել է նա: Մենք ուսումնասիրեցինք ադրբեջանական մամուլը՝ պարզելու, թե ինչպես են ընդունել Ֆոն դեր Լայենին Բաքվում, եւ ինչ խոստումներ է նա տվել այնտեղ: Haqqin.az-ի հրապարակման համաձայն՝ Ուրսուլա ֆոն դեր Լայենը հայտարարել է մի շարք առանցքային ոլորտներում Եվրոպական Միության եւ Ադրբեջանի միջեւ գործընկերությունը խորացնելու ծրագրերի մասին: «ԵՄ-ն հավատում է Հարավային Կովկասի պայծառ ապագային՝ փոխկապակցված, խաղաղությամբ եւ բարգավաճմամբ: Մենք ցանկանում ենք օգնել՝ կերտելու այդ ապագան: Ես այստեղ եմ նաեւ ԵՄ-ի եւ Ադրբեջանի միջեւ գործընկերությունը խորացնելու նպատակով՝ առեւտրից մինչեւ տրանսպորտ, էներգետիկայից մինչեւ տնտեսություն»,- ասել է նա:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԹՎԱՅԻՆ ԼԻՃ, «ԿՈՆՅԵՊՏԱՅԻՆ» ՊՈՂՈՏԱ ԵՎ ԻՐԱԿԱՆ ՎԱՆԱՁՈՐ

Մարտի 9-ին, գրեթե մեկ տարվա ընդմիջումից հետո, կայացել էր Վանաձորի ավագանու նիստ, որի ժամանակ Լոռու մարզպետ Արեն Մկրտչյանը հայտարարել էր. «Մարզկենտրոնի կառավարման ճգնաժամը հաղթահարված է»: Վանաձորցիներն ուրախացել էին, մտածել՝ վերջ, քաղաքը

վերադառնում է իր բնական աշխատանքային ռիթմին: Սպասել էին հաջորդ նիստին: Սպասել էին, սպասել... հետո էլի սպասել... Մինչ օրս սպասում են: Հիմա պարզ չէ՝ ճգնաժամն էր հաղթահարվել, թե՞ մեկ նիստ գլուխ բերելու դժվարությունը: Մեր կարծիքով՝ մի նիստով ճգնաժամը վերացած տեսնելը նույնն է, ինչ գարնան առաջին արեւոտ օրը հայտարարես՝ ամառը եկավ:

Նիստում հաստատվել էր շուրջ 35 միլիոն դոլար արժողությամբ ծրագրերի փաթեթ: Սակայն այդպես էլ չիմացանք, թե այդ գումարն ինչի վրա պիտի ծախսվի: Պետք եղավ սպասել մինչեւ ապրիլի 11-ը՝ նախընտրական քարոզարշավի ամենաթեժ օրերին վարչապետի՝ Վանաձոր այցին, որպեսզի հետո մարզպետարանի պաշտոնական կայքում հրապարակվեր նախատեսված աշխատանքների ցանկը: Խոստանում էին հիմնանորոգել 42 փողոց, ասֆալտապատել 150 բակ, տեղադրել 100 նոր վերելակ, ձեռք բերել 45 ավտոբուս, վերանորոգել 2 զբոսայգի, 3 մանկապարտեզ, վերականգնել քաղաքային լճերը, կառուցել ատրակցիոն պարկ, հիմնանորոգել հրապարակներ, ինչպես նաեւ՝ Տիգրան Մեծի պողոտան՝ «նոր կոնցեպտով»: Ցանկը, անկեղծ ասած, տպավորիչ է: Այն կարդալուց հետո թվում է, թե Վանաձորը շուտով բոլորովին այլ քաղաք է դառնալու: Միայն թե քաղաքացին, որն ամեն օր քայլում է այդ նույն փողոցներով, ամիսներ անց դեռ շարունակում է հարցնել՝ այդ աշխատանքներն ո՞ւր են: Գուցե մեկ-երկու ծրագրի մեկնարկ կա, բայց մնացածի դեպքում միայն հայտարարություններ ունենք: Ուստի, հարց՝ ե՞րբ է այդ ամենը դուրս գալու ցանկից եւ դառնալու իրականություն:

Հայտարարությունների լեզուն, իհարկե, առանձին թեմա է: Օրինակ՝ «Տիգրան Մեծի պողոտայի նոր կոնցեպտ եւ հիմնանորոգում»: Հիմնանորոգումը հասկացանք՝ «կոնցեպտը» ո՞րն է, որտե՞ղ է լինելու՝ ասֆալտի ո՞ր շերտում: Եթե հայերեն ասեք՝ «նոր հայեցակարգ», գուցե ավելի հասկանալի լինի: Մնում է հուսալ, որ բառապաշարի եվրոպականացումը կուղեկցվի նաեւ փողոցի իրական նորոգմամբ: Որովհետեւ «կոնցեպտը» միջազգային է, իսկ փոսերը՝ տեղական:

Մեկ այլ գեղեցիկ ձեւակերպում էլ ներկայացվեց ապրիլի 3-ին. «Ունենք Վանաձորի քաղաքային լճի արդիականացման թվային տարբերակը»: Առաջին անգամ կարդալիս դժվար է հասկանալ՝ թվայինը լի՞ճն է, թե՞ նախագիծը: Հետո պարզվեց՝ խոսքը եռաչափ պատկերացման մասին է: Ստացվում է, որ իրական լճից առաջ նոր կոնցեպտ եւ հիմնանորոգում»: Հիմնանորոգումը հասկացանք՝ «կոնցեպտը» ո՞րն է, որտե՞ղ է լինելու՝ ասֆալտի ո՞ր շերտում: Եթե հայերեն ասեք՝ «նոր հայեցակարգ», գուցե ավելի հասկանալի լինի: Մնում է հուսալ, որ բառապաշարի եվրոպականացումը կուղեկցվի նաեւ փողոցի իրական նորոգմամբ: Որովհետեւ «կոնցեպտը» միջազգային է, իսկ փոսերը՝ տեղական:

Մեկ այլ գեղեցիկ ձեւակերպում էլ ներկայացվեց ապրիլի 3-ին. «Ունենք Վանաձորի քաղաքային լճի արդիականացման թվային տարբերակը»: Առաջին անգամ կարդալիս դժվար է հասկանալ՝ թվայինը լի՞ճն է, թե՞ նախագիծը: Հետո պարզվեց՝ խոսքը եռաչափ պատկերացման մասին է: Ստացվում է, որ իրական լճից առաջ ծնվել է նրա թվային կյանքը: Մնում է սպասել, թե երբ թվային ջուրը կդառնա իրական:

45 նոր ավտոբուսների մասին էլ ասվում է՝ ձեռքբերման ուղղությամբ «ամենօրյա աշխատանք է տարվում»: Մենք էլ, մեր հերթին, ամենօրյա աշխատանք ենք տանում՝ քաղաքում գոնե մեկ նոր ավտոբուս գտնելու հույսով: Առայժմ երկու աշխատանքներն էլ նույն արդյունքն ունեն՝ զրո: Բանակի փողոցի հիմնանորոգումն էլ դեռ նախագծման փուլում է: Նախագծման փուլերն էլ, ինչպես երեւում է, երբեմն շատ երկար կյանք են ունենում: Իսկ ընդամենը 900 մետր երկարությամբ փողոցը շարունակում է սպասել:

Այս օրերին արդեն խոսվում է, որ Լոռու մարզպետն առաջադրվելու է Վանաձորի քաղաքապետի պաշտոնում: Դա նրա սահմանադրական իրավունքն է: Բայց եթե այսօր, լինելով մարզպետ, հնարավոր է արագացնել այս ծրագրերը, ինչո՞ւ դա չի արվում: Ինչո՞ւ պիտի վանաձորցին սպասի ընտրություններին: Միանգամայն բնական է հարցը՝ արդյո՞ք աշխատանքների հիմնական մասը չի թողնվում ընտրությունների նախաշեմին անել, որպեսզի հետո ներկայացվի որպես մեծ ձեռքբերում եւ ընտրողից քվե կորզվի: Եթե այդպես չէ, լավագույն պատասխանը ոչ թե հերթական հայտարարությունները, այլ եռուն շինհրապարակները կլինեին:

Իսկ մինչ այդ քաղաքն ունի այնպիսի խնդիրներ, որոնց լուծման համար ո՞չ 35 միլիոն դոլար է պետք, ո՞չ էլ ընտրությունների մեկնարկ: Մանկական այգու լողավազանը տարիներ շարունակ դատարկ է: Ամառները գալիս ու անցնում են, բայց երեխաները դեռ ջուր չեն տեսնում: Տանձուտի հունը մաքրվում է՝ լավ է: Բայց այն ծառերը, որոնք տասնյակ տարիներ թթվածին էին տալիս քաղաքին, չպահպանեցին: Այգիներում ու սիզամարգերում մոլախոտերն արդեն բարձր են ծաղիկներից: Շատ փողոցներ մայթեր չունեն: Տարիներ շարունակ չի լուծվում փողոցային ինքնաբուխ, «գետնատարած» առեւտրի խնդիրը. մայթերը վերածվում են շուկայի, իսկ հետիոտնը ստիպված է իջնել երթեւեկելի հատված: Այս խնդիրների լուծման համար ո՞չ միլիոնավոր դոլարներ են պետք, ո՞չ էլ նախընտրական քարոզարշավ: Պետք է հետեւողական աշխատանք:

Արդեն ամիսներ առաջ մարզպետի աշխատակազմին հարցում էի ուղարկել՝ մարզում պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխաների վերաբերյալ. քանի՞ երեխա դպրոց չի հաճախում, ինչո՞ւ, ի՞նչ քայլեր են ձեռնարկվում նրանց վերադարձնելու համար, ո՞ր համայնքներում է խնդիրը խոր, ի՞նչ արդյունք են տվել իրականացված միջոցառումները: Պատասխան չեղավ: Մնում է ենթադրել՝ արդյունք էլ չկա: Նույն ճակատագրին արժանացան նաեւ մարզի խնդիրներին վերաբերող այլ հարցումները:

Հանրային պաշտոն զբաղեցնող յուրաքանչյուր անձ կարող է քննադատվել: Բայց նա պարտավոր է պատասխանել հանրության հարցերին: Լռությունը նույնպես պատասխան է, բայց ամենավատ պատասխանը, որ կարող է տալ հանրային պաշտոնյան: Վանաձորին այսօր ամենից շատ պակասում են ոչ թե նոր խոստումները, այլ արդեն տրված խոստումների իրականացումը: Քաղաքն այսօր «կոնցեպտների», «թվային տարբերակների», «նախագծման փուլերի», «ընթացքի մեջ է», բայց «մեկնարկը» չկա: Քաղաքը հայտարարություններով չի ասֆալտապատվում, ավտոբուսները հայտարարություններով չեն երթեւեկում: Լճերը թվային պատկերներով չեն լցվում: Երեխաները խոստումներով չեն լողում, փողոցային առեւտուրն էլ մնում է գետնատարած:

Գագիկ ԱՆՏՈՆՅԱՆ

Ազատ խոսքի Ձեր հրապարակում կարող է տպագրվել Ձեր խոսքը: Գրեք մեզ, զանգեք մեզ
011 (55,94) 52 66 70, info@hraparak.am
Երեւան 0010, Մաշտոցի 4

ԿԱՐԴԱՑԵՔ ՀԱՋՈՐԴ ՀԱՄԱՐՈՒՄ

Բաժանորդագրություն
Բաժանորդագրության համար դիմեք՝
Պրեսս Ստենդ՝ 093 88 68 01
Բլից մեդիա 52 53 01

Հրապարակ
Գլխավոր խմբագիր Արմինե Օհանյան
թողարկման պատասխանատու info@hraparak.am
Ստորագրված է տպագրության 3.07.2026թ., տպագրվել է «Գինդ» տպագրատանը: Տպաքանակը՝ 3000 օրինակ:

«ՄԱՇԱՆ ՈՒ ԱՐՋԸ». ՈՐՆ Է ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՅՏՆԻ ՄՈՒԼՏՍԵՐԻԱԼԻ ՀԱՋՈՂՈՒԹՅԱՆ ԳԱՂՏՆԻՔԸ

Վերջին մեկուկես-երկու տասնամյակների ռուսական իրականության ամենահաջողված անիմացիոն նախագծերից մեկը, անխոս, համարվում է «Մաշան ու Արջը» մուլտֆիլմը: Այն սկսել է ցուցադրվել 2009 թվականից եւ կարողացել է հաղթահարել լեզվական ու մշակութային պատնեշները՝ դառնալով համաշխարհային մակարդակի մշակութային բրենդ: Ցուցադրվել է աշխարհի ավելի քան հարյուր երկրում:

Չափազանց ակտիվ ու կենսուրախ աղջնակ Մաշայի պատմությունը միայն մանկական զվարճալի պրոդուկտ չէ: Այն ճանաչելի է ողջ աշխարհում, որը միավորում է մուլտսերիալներ, գրքեր, բջջային հավելվածներ, խաղալիքներ եւ լիցենզավորված այլ արտադրանք: Եվ այս ամենի ֆոնին ամենաբնական հարցը հետեւյալն է՝ իսկ որն է «Մաշան ու Արջ»-ը մուլտի հաջողության գաղտնիքը: Մասնագետներն ասում են, որ նախագծի աննախադեպ հաջողության առաջին պայմաններից մեկը սյուժեի, լեզվի եւ պատումի ունիվերսալությունն է: Մուլտերի մեծ մասում կերպարները գործնականում երկար երկխոսություններ չեն ունենում, իսկ սյուժեն զարգանում է գործողությունների, դիմախաղի եւ վիզուալ հումորի վրա: Դրա շնորհիվ էլ անիմացիոն ֆիլմը դառնում է «դյուրամարս» եւ սիրելի երեխաների կողմից՝ անկախ երկրից, մշակույթից ու լեզվից:

Փաստացի, Մաշայի եւ Արջի հարաբերությունները երեխայի ու մեծահասակի հարաբերությունների մետաֆորան է: Արջը խորհրդանշում է փորձառությունը, պատասխանատվությունը, համբերատարությունը: Մաշան հետաքրքրասիրության, անմիջականության եւ անվերջանալի մանկական էներգիայի խորհրդանիշն է: Հենց այս հակադրությունն էլ դառնում է սյուժեի շարժիչ ուժը: Մանկական հոգեբանության տեսանկյունից՝ Մաշան տիպիկ նախադպրոցական տարիքի երեխա է, որն ուսումնասիրում է իրեն շրջապատող աշխարհը փորձի եւ սխալվելու մեթոդով: Նա միշտ խախտում է կանոնները, տալիս է հարցեր, փորձարկում է եւ բախվում սեփական արարքների հետեւանքներին: Մուլտֆիլմը կառուցված է այնպես, որ երեխան ինքնուրույն կարողանա դիտելով հանգել եզրակացությունների եւ դասեր քաղել: Բացի այդ, սերիաները երկար ու ձանձրացնող չեն: Անիմացիան վառ է, գունեղ ու եռաչափ: Մոնտաժն արված է շատ դինամիկ: Վիզուալ հումորին մեծ տեղ է տրված: Երաժշտության ուղեկցումը շատ հաջող է եւ երեխաների համար ընկալելի: Նախագիծը տեխնիկական մեծ վարպետությամբ է ստեղծվել, ինչը եւս կարեւոր է հաջողության համար: Այս ամենի համադրությամբ՝ ունենք նախագիծ, որը չափազանց սիրված է երեխաների կողմից ու նույնիսկ սիրով է դիտվում մեծահասակների կողմից:

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ, Պետ. գրանցման վկայական՝ 03Ա 082118 տրված 09.09.08
Երեւան 0010, Մաշտոցի 4, հեռ. 52 66 70, info@hraparak.am